

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այգեզարդ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Դաշտաքար գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Գինեվետ գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Տափերական գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Այգեպատ և «Ե»-«Զ» հատվածով՝ Վերին Արտաշատ գյուղական համայնքներին, հյուսիս-արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Նորաշեն գյուղական համայնքին, հյուսիսից «Է»-«Ա» հատվածով՝ Քաղցրաշեն գյուղական համայնքին:

ԱՅԳԵԶԱՐԴ -ԴԱՇՏԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Ձորի եզրին գտնվող Այգեզարդ, Դաշտաքար և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 1063 մ, հասնում է բարձունքի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, բլուրների գագաթներին գտնվող թիվ 2-9 սահմանակետերով անցնելով 6619 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 3268 մ, հասնում է Այգեզարդ, Դաշտաքար և Գինեվետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի երկարությունը 10950 մ է:

ԱՅԳԵԶԱՐԴ - ԳԻՆԵՎԵՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Այգեզարդ Գինեվետ և Տափերական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Արտաշատի ջրանցքի

եզրին, սահմանագիծը ջրանցքով անցնում է 966 մ դեպի հարավ-արևելք և հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, ճանապարհով անցնում 200 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 792 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 369 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, վարելահողի եզրով անցնում 584 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում բարձունքների գագաթների վրա գտնվող թիվ 8-12 սահմանակետերով 1266 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, անցնում 764 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 15-21 սահմանակետերով անցնում է 1858 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 23-39 սահմանակետերով անցնում 2349 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Գինեվետ, Այգեզարդ և Դաշտաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի երկարությունը 9142 մ է:

ԱՅԳԵԶԱՐԴ - ՏԱՓԵՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Այգեզարդ, Այգեպատ և Տափերական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 53 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի հյուսիս-արևելք, Այգեզարդ համայնքի ծիրանենիների այգիների եզրով, թիվ 2 սահմանակետով անցնում է 802 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղ հատում է Արտաշատի ջրանցքը, թեքվում դեպի հարավ-արևելք, ջրանցքի արևելյան ափով անցնում 252 մ, հասնում է Արտաշատի ջրանցքի եզրին գտնվող Այգեզարդ, Գինեվետ և Տափերական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի երկարությունը 1106 մ է:

ԱՅԳԵԶԱՐԴ - ԱՅԳԵՊԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Այգեզարդ, Այգեպատ և Վերին Արտաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի հունով, թիվ 1 սահմանակետով անցնում է 269 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, առվի հունով անցնում 454 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը հատում է Այգեզարդ-Այգեպատ ավտոճանապարհը, հարավարևելյան ուղղությամբ թիվ 4-9 սահմանակետերով անցնում 2644 մ, հասնում է Այգեզարդ, Այգեպատ և Տափերական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3367 մ է:

ԱՅԳԵԶԱՐԴ - ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Այգեզարդ, Վերին Արտաշատ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բետոնե կիսախողովակով, թիվ 1 սահմանակետով անցնում է 1202 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 924 մ, հատում է Ոստան-Քաղցրաշեն ավտոճանապարհը, հասնում է Այգեզարդ, Այգեպատ և Վերին Արտաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2125 մ է:

ԱՅԳԵԶԱՐԴ - ՆՈՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»

Այգեզարդ, Նորաշեն և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 94 մ, հասնում է բետոնե կիսախողովակի մոտ գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, բետոնյա կիսախողովակով, թիվ 2 սահմանակետով անցնում 878 մ, հասնում է Այգեզարդ, Վերին Արտաշատ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 972 մ է:

ԱՅԳԵԶԱՐԴ -ՔԱՂՑՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»

Այգեզարդ, Դաշտաքար և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 1-13 սահմանակետերով անցնում է 3926 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-16 սահմանակետերով անցնում է 4074 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում է 1740 մ, հասնում է ջրանցքի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, այնուհետև նորից հյուսիս-արևմուտք, ջրանցքով, թիվ 19-30 սահմանակետերով անցնում է 3994 մ և հասնում է թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, հատում Ոստան-Քաղցրաշեն ավտոճանապարհը, բետոնե կիսախողովակով, թիվ 32-49 սահմանակետերով անցնում է 2988 մ, հասնում է բետոնե կիսախողովակի մոտ գտնվող Այգեզարդ, Նորաշեն և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի երկարությունը 16723 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ավշար գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից և հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գոռավան գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արարատ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Արարատ քաղաքային և «Դ»-«Ե» հատվածով՝ Արարատ գյուղական համայնքներին, հարավ-արևելքից «Ե»-«Զ» հատվածով՝ Նոյակերտ գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ պետական սահմանին (Թուրքիայի Հանրապետություն), արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Եղեգնավան և «Ը»-«Թ» հատվածով՝ Այգավան գյուղական համայնքներին, հյուսիս-արևմուտքից «Թ»-«Ա» հատվածով՝ Վանաշեն գյուղական համայնքին:

ԱՎՇԱՐ - ԳՈՈԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Վեդի գետի ափին գտնվող Ավշար, Գոռավան և Վանաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հետո հարավ-արևելք, հատելով առուները, հողաթմբի եզրով անցնում է 553 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 711 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 563 մ, հասնում 1021 մ նիշ ունեցող Խարաբա Ջազա կոչվող սարի գագաթի թիվ 3 սահմանակետին, ապա շարունակվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 1512 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 1186 մ նիշ ունեցող Կյավջառլիկ սարի գագաթով 1177 մ, հասնում է 1178 մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, հատում ձորակն ու դաշտային ճանապարհը և, անցնելով 539 մ, հասնում է Ավշար, Գոռավան և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5054 մ է:

ԱՎՇԱՐ - ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Ավշար, Արարատ և Գոռավան գյուղական համայնքների տարածքների բաժանման տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բարձունքի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 365 մ, հասնում Ավշար, Արարատ գյուղական և Արարատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 365 մ է:

ԱՎՇԱՐ - ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Ավշար, Արարատ գյուղական և Արարատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թմբերի գագաթների թիվ 1-2 սահմանակետերով անցնում 523 մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 4-6 սահմանակետերով անցնելով 1419 մ, հասնում թմբի վրայի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնում 594 մ, հասնում թմբի վրայի թիվ 9 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 911 մ, հասնում է Ավշար, Արարատ գյուղական և Արարատ քաղաքային համայնքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3447 մ է:

ԱՎՇԱՐ - ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Ավշար, Արարատ գյուղական և Արարատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրատարի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրանցքի թիվ 1-24 սահմանակետերով անցնում 2547 մ, հասնում ջրանցքների հատման կետում գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի

հարավ, ջրատար առվով, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 3092 մ, հասնում է Երևան-Երասխա երկաթգծի կամրջի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին, ապա շարունակվում է դեպի հարավ, հատում Երևան-Երասխա երկաթգիծը և, առվով անցնելով 205 մ, հասնում է Արտաշատ-Արարատ հին խճուղու եզրի թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը հատում է նշված խճուղին, թեքվում դեպի հարավ-արևմուտք, առվով անցնում 259 մ, հասնում թիվ 30 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի թիվ 31 սահմանակետով անցնում 1662 մ, հատում Երևան-Երասխա նոր խճուղային ճանապարհը, հասնում է Արարատ, Նոյակերտ և Ավշար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7765 մ է:

ԱՎՇԱՐ - ՆՈՅԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԿԻՑԸ՝ «Ե»-«Զ»

Ավշար, Նոյակերտ և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 278 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 2 սահմանակետով անցնում 571 մ, հասնում դաշտային ճանապարհի և Կախանովի ջրանցքի հատման կետում գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, Կախանովի ջրանցքով անցնում 753 մ, հասնում ջրանցքի և ոռոգման առվի հատման կետում գտնվող թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով անցնում 1179 մ, հասնում առվի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 6-14 սահմանակետերով անցնում 890 մ, հասնում առվի եզրի թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը ոռոգման առվով պարբերաբար թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, առվի թիվ 16-23 սահմանակետերով անցնում 2623 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 284 մ, հասնում Ավշար, Նոյակերտ գյուղական համայնքների տարածքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6580 մ է:

ԱՎՇԱՐ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»

«Զ» - «Է» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի հետ:

ԱՎՇԱՐ - ԵՂԵԳՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»

Վեդի գետի ափին գտնվող Ավշար, Եղեգնավան և Այգավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Վեդի գետով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1912 մ, հասնում է գետի և Կախանովի ջրանցքի հատման կետում գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրանցքով անցնում է 903 մ, հասնում ջրանցքի և առվի հատման կետում գտնվող թիվ 9 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով հատելով դաշտային ճանապարհը, թիվ 10 սահմանակետով անցնում է 1236 մ, հասնում առվի եզրի թիվ 11 սահմանակետին, այնուհետև նույն առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, առվի թիվ 12 սահմանակետով անցնելով 1125 մ, հասնում է Ավշար, Եղեգնավան գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5177 մ է:

ԱՎՇԱՐ - ԱՅԳԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Թ»

Վեդի գետի ափին գտնվող Ավշար, Այգավան և Վանաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, Վեդի գետի թիվ 1-32 սահմանակետերով անցնում 5466 մ, հասնում է Վեդի գետի ափին գտնվող Ավշար, Այգավան և Եղեգնավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5466 մ է:

ԱՎՇԱՐ - ՎԱՆԱՇԵՆ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ա»

Վեդի գետի ափին գտնվող Ավշար, Գոռավան և Վանաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1902 մ, հասնում է Վեդի գետի ափին գտնվող Ավշար, Վանաշեն և Այգավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1902 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍՏԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արարատ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արարատ քաղաքային, «Բ»-«Գ» հատվածով՝ Ավշար և «Գ»-«Դ» հատվածով՝ Գոռավան գյուղական համայնքներին, արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Ուրցաձոր, «Ե»-«Զ» հատվածով՝ Շաղափ և «Զ»-«Է» հատվածով՝ Սուրենավան գյուղական համայնքներին, հարավից «Է»-«Ը» հատվածով՝ Արմաշ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ պետական սահմանին՝ (Թուրքիայի Հանրապետություն), արևմուտքից «Թ»-«Ժ» հատվածով՝ Նոյակերտ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից «Ժ»-«Ա» հատվածով՝ Ավշար գյուղական համայնքին:

ԱՐԱՐԱՏ – ք. ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»- «Բ»

Արարատ, Ավշար գյուղական և Արարատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ոռոգման առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 1-19 սահմանակետերով անցնում է 1282 մ, հասնում գերեզմանոցի եզրի թիվ 20 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 21-24 սահմանակետերով անցնում 1056 մ, հասնում Երևան-Երասխ երկաթգծի հատման կետում գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, երկաթգծով, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 3556 մ, հասնում է խմելու ջրի օրվա կարգավորման ջրամբարի դիմաց գտնվող թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Երևան-Երասխ հին խճուղային ճանապարհը, անցնում է 157 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 105 մ, հասնում ավտոտնակների արևմտյան մասում գտնվող թիվ 30 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով, թիվ 31-37 սահմանակետերով անցնում 553 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 55 մ, հասնում զինվորական մասի ցանկապատի անկյան մոտ գտնվող թիվ 39 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով անցնում 215 մ, հասնում է ցամաքուրդի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 41-43 սահմանակետերով անցնում 1004 մ, հասնում է Երևան-Երասխ խճուղու եզրին գտնվող թիվ 44 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 143 մ, հասնում է բնակավայրի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, շրջանցելով բնակավայրի կառուցապատ տարածքի արևելյան եզրագիծը, թիվ 46-56 սահմանակետերով անցնում է 1334 մ, հասնում Երևան-Երասխ հին խճուղու եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, խճուղով անցնում 422 մ, հասնում է ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ճանապարհով հատում Երևան-Երասխ երկաթգիծը, անցնում 315 մ, հասնում է թիվ 59 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ճանապարհով, թիվ 60 սահմանակետով անցնում 643 մ, հասնում է թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում երկաթգիծը, ճանապարհով, թիվ 62-64 սահմանակետերով անցնում 791 մ, հասնում է թիվ 65 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 66-68 սահմանակետերով անցնում 538 մ, հասնում է թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա արևելք, երկաթգծի առանցքով, թիվ 70-76 սահմանակետերով անցնում 1733 մ, հասնում է երկաթգծի եզրին գտնվող թիվ 77 սահմանակետին: Թիվ 77 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 78 սահմանակետով անցնում 341 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 79 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ճանապարհով անցնում 484 մ, հասնում է ճանապարհների խաչմերուկի թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհի թիվ 81-82 սահմանակետերով անցնում 546 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 83 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 84 սահմանակետով անցնում 309 մ, հասնում է ոսկու գործարանի պարսպի մոտ գտնվող թիվ 85 սահմանակետին: Թիվ 85 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ոսկու գործարանի պարսպով անցնում 920 մ, հասնում թիվ 86

սահմանակետին: Թիվ 86 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, ջրբաժանի թիվ 87-88 սահմանակետերով անցնում 762 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 89 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թմբերի գագաթների թիվ 90-102 սահմանակետերով անցնում 3325 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Արարատ, Ավշար գյուղական և Արարատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20589 մ է:

ԱՐԱՐԱՏ – ԱՎՇԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»- «Գ»

Արարատ, Ավշար գյուղական և Արարատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բարձունքի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 365 մ, հասնում Արարատ, Ավշար և Գոռավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 365 մ է:

ԱՐԱՐԱՏ– ԳՈՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»- «Դ»

Արարատ, Ավշար և Գոռավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1222 մ նիշ ունեցող բլրի գագաթով և թիվ 1 սահմանակետով 870 մ, հասնում է թամբի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, լեռնաշղթայի գագաթներով անցնում 2248 մ, հասնում է 1515 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 1149 մ, հասնում ջրբաժանի թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով դաշտային ճանապարհները, ջրբաժանի թիվ 5-6 սահմանակետերով անցնում է 3331 մ, հասնում Արարատ, Գոռավան և Ուրցածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7598 մ է:

ԱՐԱՐԱՏ – ՈՒՐԾԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Արարատ, Ուրցածոր և Գոռավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 568 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 343 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 511 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 376 մ, հասնում է ձորակի սկզբնամասի մոտ գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորի թիվ 5-17 սահմանակետերով անցնում 1822 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 327 մ, հասնում Վեղի գետի ափին գտնվող Արարատ, Ուրցածոր և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3947 մ է:

ԱՐԱՐԱՏ – ՇԱՂԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»- «Ձ»

Վեղի գետի ափին գտնվող Արարատ, Ուրցածոր և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 82 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, բարձունքների գագաթներով, թիվ 2-9 սահմանակետերով անցնելով 629 մ, հասնում է 1307 մ միջ ունեցող բարձունքի գագաթի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 107 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 12-16 սահմանակետերով անցնում 525 մ, հասնում է դաշտային ճանապարհի և ձորի հատման կետում գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորի թիվ 18-36 սահմանակետերով անցնում 1611 մ, հասնում ձորի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 37 սահմանակետին: Թիվ 37

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 38-43 սահմանակետերով անցնելով 1120 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Արարատ, Շաղափ և Սուրենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ձ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4074 մ է:

ԱՐԱՐԱՏ – ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ»- «Ե»

Արարատ, Շաղափ և Սուրենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորապտույտների թիվ 1-40 սահմանակետերով անցնում 4945 մ, հասնում թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում նախ ոռոգման առվով, ապա եռանկյունաչափական թիվ 42 սահմանակետով 1274 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 43 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 44-46 սահմանակետերով անցնում 906 մ, հասնում 857 մ նիշով բարձունքի գագաթի թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 401 մ, հասնում է թիվ 48 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 49-51 սահմանակետերով անցնում 1282 մ, հասնում թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով անցնում 455 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, հատում Երևան-Երասխ խճուղային ճանապարհը, անցնում 187 մ, հասնում է թիվ 54 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում Երևան-Երասխ երկաթգիծը, թիվ 55-56 սահմանակետերով անցնում 524 մ, հասնում Կախանովի ջրանցքի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, նշված ջրանցքով անցնում 3242 մ, հասնում 803 մ նիշ ունեցող հողաթմբի վրա գտնվող թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 59 սահմանակետով անցնում 810 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 60 սահմանակետին, ապա նույն ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հետո հարավ-արևմուտք, թիվ 61-63 սահմանակետերով անցնում 2030 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին՝ ոլորանի մոտ գտնվող թիվ 64 սահմանակետին, այնուհետև նույն ճանապարհով

թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա կտրուկ թեքվում դեպի արևմուտք, ճանապարհի թիվ 65 սահմանակետով անցնում 1321 մ, հասնում է ճանապարհի եզրի թիվ 66 սահմանակետին: Թիվ 66 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լճակի եզրով, թիվ 67 սահմանակետով անցնելով 1952 մ, հասնում է Արարատ, Արմաշ և Սուրենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19330 մ է:

ԱՐԱՐԱՏ – ԱՐՄԱՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»- «Ը»

Արարատ, Սուրենավան և Արմաշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը և ուղիղ գծով անցնում 2476 մ, հասնում է Արաքս գետի ափին գտնվող բլրի գագաթի, Արմաշ, Արարատ գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2476 մ է:

ԱՐԱՐԱՏ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)

ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»- «Թ»

«Ը»-«Թ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի հետ:

ԱՐԱՐԱՏ – ՆՈՅԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»- «Ժ»

Արարատ, Նոյակերտ և Ավշար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ոռոգման առվով, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1616 մ, հասնում Կախանովի ջրանցքի ձախ եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 268 մ, հատում է Կախանովի ջրանցքը, հասնում ջրանցքի եզրի թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ոռոգման առվով, թիվ 7-11 սահմանակետերով անցնում 3913 մ,

հասնում է Արարատ, Նոյակերտ գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ» - «Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5796 մ է:

ԱՐԱՐԱՏ – ԱՎՇԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ժ»- «Ա»

Արարատ, Ավշար գյուղական և Արարատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրատարի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրանցքի թիվ 1-24 սահմանակետերով անցնում 2547 մ, հասնում ջրանցքների հատման կետում գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրատար առվով, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 3092 մ, հասնում է Երևան-Երասխա երկաթգծի կամրջի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին, ապա շարունակվում է դեպի հարավ, հատում Երևան-Երասխա երկաթգիծը և, առվով անցնելով 205 մ, հասնում է Արտաշատ-Արարատ հին խճուղու եզրի թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը հատում է նշված խճուղին, թեքվում դեպի հարավ-արևմուտք, առվով անցնում 259 մ, հասնում թիվ 30 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի թիվ 31 սահմանակետով անցնում 1662 մ, հատում Երևան-Երասխա նոր խճուղային ճանապարհը, հասնում է Արարատ, Նոյակերտ և Ավշար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին:

«Ժ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7765 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՍԱՐՁԻ ԱՐԲԱԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արբաթ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղանիստ գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Ազատաշեն գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Խաչփառ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Հայանիստ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Արմավիրի մարզին:

ԱՐԲԱԹ - ԳԵՂԱՆԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Արբաթ, Գեղանիստ գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առկա իջնում է հարավ-արևելք, անցնում 509 մ, հասնում է Գեղանիստ գնացող միջգյուղյա ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, ճանապարհով անցնելով 185 մ, հասնում է Արբաթ, Գեղանիստ և Ազատաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 695 մ է :

ԱՐԲԱԹ - ԱԶԱՏԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Արբաթ, Գեղանիստ և Ազատաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առկա, թիվ 1 սահմանակետով անցնում 696 մ, հասնում է առուների հատման տեղում գտնվող Արբաթ, Ազատաշեն և Խաչփառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին :

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 696 մ է :

ԱՐԲԱՔ – ԽԱՉՓԻԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Արբաք, Խաչփառ և Ազատաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ոռոգման առուների հատման տեղում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ոռոգման առվով անցնում 84 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, հետո թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 2-6 սահմանակետերով անցնում 422 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 911 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 250 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 14 սահմանակետով անցնում 198 մ, հասնում է Արբաք, Խաչփառ և Հայանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին :

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1864 մ է:

ԱՐԲԱՔ – ՀԱՅԱՆԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Արբաք, Խաչփառ և Հայանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 133 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 119 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, այստեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 482 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հետո դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-10 սահմանակետերով անցնում 706 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, թիվ 12-13 սահմանակետերով անցնում 320 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 150 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 441 մ, հասնում է ցամաքուղիների հատման կետում գտնվող Արբաք, Հայանիստ գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2350 մ է:

ԱՐԲԱԹ - ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

«Ե»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արգավանդ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Արգավանդ գյուղական համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Երևան քաղաքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գետափնյա գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Գեղանիստ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Երևան քաղաքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Արմավիրի մարզին:

ԱՐԳԱՎԱՆԴ - ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Արարատի մարզի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ԱՐԳԱՎԱՆԴ - ԳԵՏԱՓՆՅԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Արգավանդ, Գետափնյա գյուղական և Երևան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Հրազդան գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 933 մ, հասնում Արգավանդ, Գետափնյա և Գեղանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 933 մ է:

ԱՐԳԱՎԱՆԴ - ԳԵՂԱՆԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Արգավանդ, Գեղանիստ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ոռոգման առվով, թիվ 1 սահմանակետով անցնում 480 մ, հասնում է առուների հատման կետում գտնվող թիվ 2 սահմանակետին, ապա ոռոգման առվով

թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 3-7 սահմանակետերով անցնում 552 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 63 մ, հասնում է առվի եզրի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը բնակավայրերի եզրագծով թեքվում է դեպի արևելք, հատում Մասիս-Նուռնուս երկաթգիծը, անցնում թիվ 10-13 սահմանակետերով 355 մ, հասնում Յրագղան գետի աջ ափին գտնվող Արգավանդ, Գեղանիստ և Գետափնյա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1450 մ է:

ԱՐԳԱՎԱՆԴ - ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի մարզի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ԱՐԳԱՎԱՆԴ - ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

«Ե»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արմաշ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շաղափ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Երասխ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Թուրքիայի Հանրապետություն), հյուսիսից «Դ»-«Ե» հատվածով՝ Արարատ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիս-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Սուրենավան գյուղական համայնքին:

ԱՐՄԱՇ – ՇԱՂԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Ա»-«Բ»

Արմաշ, Սուրենավան և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, ճանապարհի թիվ 1-27 սահմանակետերով անցնում 2788 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող Արմաշ, Շաղափ և Երասխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2788 մ է:

ԱՐՄԱՇ – ԵՐԱՍԽ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Բ»-«Գ»

Դաշտային ճանապարհի եզրին գտնվող Արմաշ, Շաղափ և Երասխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 102 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, անցնում է թիվ 2-4 սահմանակետերով 861 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ճանապարհով, թիվ 6-27 սահմանակետերով անցնում 3186 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է հարավ-արևելք, անցնում դաշտային ճանապարհով, թիվ 29 սահմանակետով 1339 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով թիվ 31-34 սահմանակետերով 1698 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 36-37 սահմանակետերով անցնում 719 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 300 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում ձորով 890 մ, հասնում է թիվ 40 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է հարավ-արևելք, անցնում առվով, թիվ 41-45 սահմանակետերով 2299 մ, հասնում է թիվ 46 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում հարավ-արևմուտք, ճանապարհով անցնում 867 մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ճանապարհով անցնում 429 մ, հասնում է թիվ 48 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 626 մ, հասնում է թիվ 49 սահմանակետին, ապա նորից կտրուկ թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 477 մ, հասնում է թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ճանապարհով անցնում 114 մ, հասնում է թիվ 51 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 811 մ, հասնում է թիվ 52 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 322 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 54 սահմանակետով անցնում 1993 մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 56 սահմանակետով 1283 մ, հասնում է թիվ 57 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է հարավ-արևելք, անցնում 790 մ, հասնում է թիվ 58 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1820 մ, հասնում է հողաթմբի վրա գտնվող թիվ 59 սահմանակետին: Թիվ 59 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 1581 մ, հասնում հողաթմբի վրա գտնվող թիվ 60 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, թիվ 61 սահմանակետով անցնում 1211 մ, հասնում է առվի եզրին գտնվող Արմաշ, Երասխ գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 23715 մ է:

**ԱՐՄԱՇ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»- «Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի հետ:

ԱՐՄԱՇ - ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»- «Ե»

Արմաշ, Սուրենավան և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը և ուղիղ գծով անցնում 2476 մ, հասնում է Արաքս գետի ափին գտնվող բլրի գագաթի Արմաշ, Արարատ գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2476 մ է:

ԱՐՄԱՇ – ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»- «Ա»

Արմաշ, Սուրենավան և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 1-16 սահմանակետերով անցնում 2546 մ, հասնում է դաշտային ճանապարհի, խողովակաշարի և ոռոգման առվի հատման կետում գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը մայր ջրատարով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Սուրենավան-Արմաշ խճուղային ճանապարհը և Երևան-Ջուլֆա երկաթգիծը, թիվ 18-21 սահմանակետերով անցնում է 3758 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 23 սահմանակետով անցնում 891 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 545 մ, հասնում ջրատար առվի եզրի թիվ 25 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրատար առվով անցնում 465 մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձկնաբուծական երկու լճերի միջև ընկած ճանապարհով անցնում 2563 մ, հասնում է թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 637 մ, հասնում է

Արմաշ, Արարատ և Սուրենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11406 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այնթապ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Այնթապ համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Երևան քաղաքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Նոր Խարբերդ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Մարմարաշեն գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Մասիս քաղաքային և «Ե»-«Ա» հատվածով՝ Նորաբաց գյուղական համայնքներին:

ԱՅՆԹԱՊ- ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի մարզի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ԱՅՆԹԱՊ -ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Այնթապ, Նոր Խարբերդ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Այնթապ բնակավայրի հյուսիսարևելյան մասում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Այնթապ բնակավայրի արևելյան սահմանով անցնող առվով, թիվ 1-18 սահմանակետերով անցնում 1509 մ, հասնում Երևան-Մարմարաշեն խճուղային ճանապարհի և առվի հատման կետում գտնվող թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, Երևան-Մարմարաշեն ճանապարհով, թիվ 20-26 սահմանակետերով անցնում 3329 մ, հասնում Մարմարաշեն - Այնթապ միջգյուղյա ճանապարհի եզրին գտնվող Այնթապ, Նոր Խարբերդ և Մարմարաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4838 մ է:

ԱՅՆԹԱՊ - ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Այնթապ, Մարմարաշեն գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Երևան-Արարատ մայրուղու և ցամաքուղու հատման կետում, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ցամաքուղով, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 1086 մ, հասնում Մարմարաշեն - Այնթապ միջգյուղյա ճանապարհի եզրին գտնվող Այնթապ, Նոր Խարբերդ և Մարմարաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1086 մ է:

ԱՅՆԹԱՊ - ՄԱՍԻՍ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Ցամաքուղու և առուների հատման կետում գտնվող Այնթապ, Նորաբաց գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ցամաքուղով, թիվ 1 սահմանակետով անցնում 133 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա հատվում է Մասիս-Երևան երկաթգծի հետ, շարունակվում հարավարևմտյան ուղղությամբ 1224 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, հատում Մասիս-Այնթապ ճանապարհը, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 841 մ, հասնում է ցամաքուղուների հատման տեղում գտնվող թիվ 6 սահմանակետին: Այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 599 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, Երևան-Արարատ մայրուղով, թիվ 8-13 սահմանակետերով անցնում 1553 մ, հասնում է Երևան-Արարատ մայրուղու և ցամաքուղու հատման կետում գտնվող Այնթապ, Մարմարաշեն գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4350 մ է:

ԱՅՆԹԱԿ - ՆՈՐԱԲԱՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Այնթապ, Նորաբաց գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ոռոգման առուների հատման կետում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 1- 51 սահմանակետերով անցնում 2094 մ, հասնում է ցամաքուղի և ոռոգման առուների հատման կետում գտնվող Այնթապ, Նորաբաց գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետն:

«Ե» - «Ա» սահմանգծի ընդհանուր երկարությունը 2094 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՉՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱՎԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կոտայքի մարզի Հացավան գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Լանջազատ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Արվյան գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Արևշատ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Ջրաշեն գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Երևան քաղաքին:

ԲԱՐՉՐԱՇԵՆ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

ԲԱՐՉՐԱՇԵՆ - ԼԱՆՋԱԶԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Բարձրաշեն, Լանջազատ գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1160 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, թիվ 5 սահմանակետով անցնում 319 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 821 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 88 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 147 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 359 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որտեղից

թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 17 սահմանակետով անցնում 274 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, ապա հյուսիս, թիվ 19 սահմանակետով անցնում 76 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հետո հյուսիս, ապա կրկին հյուսի-արևմուտք, թիվ 21-24 սահմանակետերով անցնում 527 մ, հասնում է թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 26 սահմանակետով անցնում 407 մ, հասնում է թիվ 27 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 28 սահմանակետով անցնում 394 մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, հետո թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 796 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում հարավ, անցնում 236 մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 337 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 167 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, ապա նորից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 36-37 սահմանակետերով անցնում 1987 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 92 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում թիվ 40 սահմանակետով 739 մ, հասնում է Երևան-Բարձրաշեն ավտոճանապարհի վրա գտնվող Բարձրաշեն, Լանջազատ և Աբովյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8922 մ է:

ԲԱՐՁՐԱՇԵՆ - ԱԲՈՎՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Բարձրաշեն, Լանջազատ և Աբովյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 759 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, թիվ 6-10 սահմանակետերով անցնում 772 մ, հասնում Բարձրաշեն, Աբովյան և Արևշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1531 մ:

ԲԱՐՁՐԱՇԵՆ - ԱՐԵՎՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Բարձրաշեն, Արևշատ և Ջրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 107 մ, հասնում Բարձրաշեն, Աբովյան և Արևշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 107 մ:

ԲԱՐՁՐԱՇԵՆ - ՋՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Բարձրաշեն, Ջրաշեն գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 888 մ, հասնում Բարձրաշեն, Արևշատ և Ջրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 888 մ է:

ԲԱՐՁՐԱՇԵՆ - ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ա»

«Զ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արարատի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բուրաստան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կանաչուտ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ազատավան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Թուրքիայի Հանրապետություն), հյուսիսից «Դ»-«Ե» հատվածով՝ Արաքսավան, «Ե»-«Զ» հատվածով՝ Մասիս և «Զ»-«Ա» հատվածով՝ Բյուրավան գյուղական համայնքներին:

ԲՈՒՐԱՍՏԱՆ - ԿԱՆԱՉՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Բուրաստան, Կանաչուտ և Բյուրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ազատ գետի և Մխչյան ջրանցքի հատման կետում, սահմանագիծը ջրանցքի հյուսիսային ափով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 269 մ, հասնում է Բուրաստան, Կանաչուտ և Ազատավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 269 մ է:

ԲՈՒՐԱՍՏԱՆ - ԱԶԱՏԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Բուրաստան, Ազատավան և Կանաչուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Մխչյան ջրանցքի աջ ափին, սահմանագիծը բետոնյա կիսախողովակներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1621 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 161 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 131 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, հատում Երևան-Երասխ երկաթուղին, առվի հունով, թիվ 8 սահմանակետով անցնում է 861 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք,

թիվ 10 սահմանակետով անցնում 224 մ, հասնում է Ազատ գետի ափին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ, Ազատ գետի հունի թիվ 12-16 սահմանակետերով անցնում 1134 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, հատում Բուրաստան-Արտաշատ ավտոճանապարհը, անցնում թիվ 18-22 սահմանակետերով 1132 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, ապա հատում է Երևան-Արարատ մայրուղին, անցնում 212 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը, շարունակվելով հարավարևմտյան ուղղությամբ, հատում է սահմանային փշալարը, թիվ 25 սահմանակետով անցնում 1062 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, այնուհետև գետի հունով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնում 242 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին, որտեղ հատում է «Բելայա կանավա» ջրատարը, անցնում գետի հունով, թիվ 29 սահմանակետով 376 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 31 սահմանակետով անցնում 154 մ, հասնում է Արաքս գետի ափին գտնվող Բուրաստան, Ազատավան գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7308 մ է:

ԲՈՒՐԱՍՏԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի հետ:

ԲՈՒՐԱՍՏԱՆ – ԱՐԱՔՍԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Արաքս գետի ափին գտնվող Բուրաստան, Արաքսավան գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, Արաքս գետով, թիվ 1-9 սահմանակետերով անցնելով 2396 մ, հասնում է Բուրաստան, Արաքսավան և Մասիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2396 մ է:

ԲՈՒՐԱՍՏԱՆ – ՄԱՍԻՍ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Ջանգակատուն, Վարդաշատ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-

արևելք, ճանապարհով անցնում 371 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 1 սահմանակետին, հետո շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում 1436 մ, հասնում է ջրբաժանի թիվ 3 սահմանակետին, այնուհետև ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում թիվ 4-5 սահմանակետերով 663 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում է թիվ 7-8 սահմանակետերով 814 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորակով անցնելով 183 մ, հասնում է դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 10 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 11-14 սահմանակետերով 638 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 16-21 սահմանակետերով անցնում 1545 մ, հասնում է 2172.0 մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 286 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 129 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 1107 մ, հասնում 1772.5 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող թիվ 25 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 209 մ, հատելով ձորակը, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 596 մ, հատում Ջանգալատուն-Վարդաշատ միջհամայնքային ճանապարհը, հասնում է թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 28-32 սահմանակետերով անցնելով 1291 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում Ուրցալանջ-Ջանգալատուն խճուղային ճանապարհը, անցնելով թիվ 34 սահմանակետով 690 մ, հասնում 1693.8 մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 35 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, անցնում 230 մ, հասնում է թիվ 42 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 673 մ, հասնում Ջանգալատուն, Վարդաշատ և Ուրցալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետին:

«Ջ» - «Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14802 մ է:

ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆ – ԼՈՒՍԱՇՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»

Ձանգակատուն, Լուսաշող և Ուրցաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» եռանկյունաչափական հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորակը, անցնում 1453 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 2-9 սահմանակետերով անցնում է 1105 մ, հասնում հաջորդ ձորակի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Այստեղից հին բնակավայրի միջով անցնող առվակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվակի թիվ 11-17 սահմանակետերով անցնում 1221 մ, հասնում է Վեդի գետի ձախակողմյան վտակի հետ հատման կետում գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը Վեդի գետի ձախակողմյան վտակով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, հատում ձորակները, թիվ 19-54 սահմանակետերով անցնում 5203 մ, հասնում է թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 590 մ, հասնում է 2542.5 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 56 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 57-59 սահմանակետերով անցնում 2779 մ, հասնում է թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ, ապա կրկին հարավ-արևմուտք, թիվ 61-63 սահմանակետերով անցնում 2299 մ, հասնում է ջրբաժանի մոտ գտնվող Ձանգակատուն, Լուսաշող և Վարդաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14651 մ է:

ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆ – ՈՒՐՑԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Ձանգակատուն, Ուրցաձոր գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակը, թիվ 1-3 սահմանակետերով անցնում է 1999 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 5 սահմանակետով անցնելով 458 մ, հասնում է Ձանգակատուն, Ուրցաձոր և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2457 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լանջազատ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կոտայքի մարզին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Դվին գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Գետազատ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Աբովյան գյուղական համայնքին և հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Բարձրաշեն գյուղական համայնքին:

ԼԱՆՋԱԶԱՏ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

ԼԱՆՋԱԶԱՏ –ԴՎԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Բ»-«Գ»

Ազատ գետի եզրին գտնվող Լանջազատ, Դվին գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, հարավ-արևելք, այնուհետև հարավ-արևմուտք անցնում գետով 2554 մ, հասնում է գետի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 276 մ, հասնում է գետի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում հարավ, ժայռի գագաթով անցնում 120 մ, հասնում է ժայռի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով Խոսրովի արգելանոցի սահմանագծով, թիվ 4-6 սահմանակետերով 1225 մ, հասնում է բարձունքի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնելով թիվ 8 սահմանակետով 828 մ, հասնում է սելավատարի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում

սելավատարով, թիվ 10-25 սահմանակետերով 2933 մ, հասնում է գետի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին: Գետի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետից սահմանագիծը, անցնելով գետով դեպի արևմուտք 82 մ, հասնում է գետի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 28-73 սահմանակետերով 6589 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լանջազատ, Դվին և Գետազատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծերի ընդհանուր երկարությունը 14607 մ է:

ԼԱՆՋԱԶԱՍ – ԳԵՏԱԶԱՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Լանջազատ, Դվին և Գետազատ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով թիվ 1 սահմանակետով 762 մ, հասնում է սարի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, ապա սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնելով թիվ 3 սահմանակետով 950 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում է դաշտային ճանապարհը, անցնելով թիվ 5-7 սահմանակետերով 2359 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում ձորով, թիվ 9 սահմանակետով 710 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում թիվ 11 սահմանակետով 1138 մ, հասնում է ժայռի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, արևմուտք, անցնում Խոսրովի արգելանոցի եզրով, թիվ 13-18 սահմանակետերով 2170 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում թիվ 20 սահմանակետով 492 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին, որտեղից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում թիվ 22-29 սահմանակետերով 2852 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս, անցնում դաշտային ճանապարհով 206 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, անցնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 32-40 սահմանակետերով 1711 մ, հասնում է դաշտային ճանապարհի և Դվին ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 41

սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, Դվին ջրանցքի թիվ 42-56 սահմանակետերով անցնում 1430 մ, հասնում է Ազատ գետի և Դվին ջրանցքի հատման տեղում գտնվող Լանջազատ, Գետազատ և Աբովյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14779 մ է:

ԼԱՆՋԱԶԱՏ – ԱԲՈՎՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Լանջազատ, Աբովյան և Բարձրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Երևան-Բարձրաշեն ավտոճանապարհի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 343 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա հատում է պոնպակայանի ցանկապատը, թիվ 3-5 սահմանակետերով շրջանցում ցանկապատը, անցնում 310 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 203 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղ հատում է բնական ձորակը, թեքվում դեպի հարավ-արևմուտք, ձորակով, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 184 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում թիվ 10-11 սահմանակետերով 138 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 100 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, թեքվում դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ձորակով, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 405 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, որտեղ հատում է Արևշատ–Լանջազատ ավտոճանապարհը, շարունակվում նույն ուղղությամբ, անցնում թիվ 18 սահմանակետով 249 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով Արտաշատի ջրանցքը, թիվ 20-21 սահմանակետերով անցնում է 261 մ, հասնում է Ազատ գետի եզրին թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում Ազատ գետով, թիվ 23-26 սահմանակետերով 581 մ, հասնում է Ազատ գետի և Դվինի ջրանցքի հատման տեղում գտնվող Լանջազատ, Գետազատ և Աբովյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2776 մ է:

ԼԱՆՁԱԶԱՏ – ԲԱՐՃՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Լանջազատ, Բարձրաշեն գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1160 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում դեպի հյուսիս, թիվ 5 սահմանակետով անցնում 319 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 821 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 88 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 147 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 359 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 17 սահմանակետով անցնում 274 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, ապա հյուսիս, թիվ 19 սահմանակետով անցնում 76 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում դեպի հյուսիս-արևելք, հետո հյուսիս, ապա կրկին հյուսիս-արևմուտք, թիվ 21-24 սահմանակետերով անցնում 527 մ, հասնում է թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 26 սահմանակետով անցնում 407 մ, հասնում է թիվ 27 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 28 սահմանակետով անցնում 394 մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, հետո թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 796 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում հարավ, անցնում 236 մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 337 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 167 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, ապա նորից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 36-37 սահմանակետերով անցնում 1987 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 92 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում թիվ 40 սահմանակետով 739 մ, հասնում է Երևան-Բարձրաշեն ավտոճանապարհի վրա գտնվող Լանջազատ,

Բարձրաշեն և Աբովյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8922 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լանջանիստ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լուսաշող գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Լանջառ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Պարույր Սևակ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Շաղափ գյուղական համայնքին:

ԼԱՆՋԱՆԻՍՏ – ԼՈՒՄԱՇՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Առվի եզրին գտնվող Լանջանիստ, Լուսաշող և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 958 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղ հատում է ձորակը, թեքվում դեպի հարավ-արևմուտք, հին գյուղատեղի ավերակներով, թիվ 3 սահմանակետով անցնում 1085 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև հատելով դաշտային ճանապարհը, սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 653 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, այստեղից ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 318 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 159 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանի թիվ 9-11 սահմանակետերով անցնում 1218 մ, հասնում է 2383.1 մ նիշ ունեցող բարձունքին գտնվող թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ժայռի եզրով անցնում 1403 մ, հասնում է 2482.6 մ նիշ ունեցող բարձունքին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը քիչ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 388 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 711 մ, հասնում է

2422.0 մ նիշ ունեցող բարձունքին գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 974 մ, հասնում է 2295.2 մ նիշ ունեցող ժայռի թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 407 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում ձորակը, լանջով անցնում 384 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 326 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 59 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 855 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 248 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 473 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 387 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 27-28 սահմանակետերով անցնում 686 մ, հատում Լուսաշող-Շաղափ միջհամայնքային ճանապարհը, հասնում է Սելավ գետի եզրին գտնվող թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Սելավ գետով, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 602 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 33-34 սահմանակետերով անցնում 1176 մ, հասնում է երկու ձորերի հատման տեղում գտնվող Լանջանիստ, Լանջառ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13472 մ է:

ԼԱՆՋԱՆԻՍՏ – ԼԱՆՋԱՌ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Բ»-«Գ»

Լանջանիստ, Լանջառ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է երկու ձորերի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 436 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 135 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, հատում

է ձորակը, թիվ 3 սահմանակետով անցնում 567 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-6 սահմանակետերով անցնում 428 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով ձորակներ և Լանջառ-Ձինջուլու ճանապարհը, ձորակի թիվ 8-29 սահմանակետերով անցնում է 3415 մ, հասնում ձորակի եզրի թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 572 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 31 սահմանակետին, այնուհետև դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհի թիվ 32-39 սահմանակետերով անցնելով 1308 մ, հասնում է ճանապարհների խաչմերուկում գտնվող Լանջանիստ, Լանջառ և Պարույր Սևակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6861 մ է:

ԼԱՆՋԱՆԻՍՏ – ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Լանջանիստ, Պարույր Սևակ և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, հատելով ձորակները, դաշտային ճանապարհը, ժայռեր և Բիրալի գետը, ճանապարհի թիվ 1-19 սահմանակետերով անցնում է 3621 մ, հասնում է ճանապարհների խաչմերուկում գտնվող Լանջանիստ, Պարույր Սևակ և Լանջառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3621 մ է:

ԼԱՆՋԱՆԻՍՏ –ՇԱՂԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Լանջանիստ, Լուսաշող և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է առվի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 644 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, աղբյուրի մոտով, դաշտային ճանապարհի թիվ 4-11 սահմանակետերով անցնում 2204 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին, այստեղից նույն

ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս, այնուհետև հյուսիս-արևմուտք, հարավ-արևմուտք և կրկին հյուսիս-արևմուտք, Աղբուլաղ քանդված գյուղատեղի մոտով և ճանապարհների ոլորանների թիվ 13-28 սահմանակետերով անցնելով 3500 մ, հասնում է 2088 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, քանդված ֆերմաների հյուսիսային եզրագծով անցնում 592 մ, հասնում Վեդի գետի ձախակողմյան վտակի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին, այստեղից նշված վտակով շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, վտակի թիվ 31-32 սահմանակետերով անցնում 638 մ, հասնում վտակի եզրի թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, լանջով` թիվ 34-35 սահմանակետերով անցնում 1948 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 36 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 454 մ, հասնում Ժայռի եզրին գտնվող թիվ 37 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Ժայռերի եզրերով, թիվ 38-41 սահմանակետերով անցնելով 688 մ, հասնում է Ժայռի կատարին գտնվող թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 43 սահմանակետով անցնում 319 մ, հասնում թիվ 44 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև դեպի հարավ-արևմուտք, լանջերով և գագաթներով, թիվ 45-52 սահմանակետերով անցնելով 2249 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բլրի արևելյան լանջով, թիվ 54 սահմանակետով անցնում 1710 մ, հասնում թիվ 55 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 146 մ, հասնում թիվ 56 սահմանակետին: Թիվ 56 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակղով անցնում 506 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին, այստեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 668 մ, հասնում է թիվ 58 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 59-63 սահմանակետերով անցնում 568 մ, հասնում թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 319 մ, հասնում ձորակի եզրի թիվ 65 սահմանակետին, ապա շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 66-67 սահմանակետերով անցնում է 2037 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 68 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 83 մ, հասնում թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է

դեպի հարավ, ձորակով, ապա հին առվով հատում է Շաղափ-Լուսաշող խճուղային ճանապարհը, հասնում կամրջին, այստեղից խճուղով հասնում է առաջին ձորակի կամրջին, այնուհետև ձորակի ոլորապտույտների թիվ 70-95 սահմանակետերով անցնելով 3952 մ, հասնում է ձորակների հատման կետում գտնվող թիվ 96 սահմանակետին: Թիվ 96 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ձորի թիվ 97-101 սահմանակետերով անցնում է 992 մ, հասնում Ժայռի եզրին գտնվող թիվ 102 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորը, անցնում է 748 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 103 սահմանակետին: Թիվ 103 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, ապա նորից հարավ-արևմուտք, ձորի թիվ 104-120 սահմանակետերով անցնում 1479 մ, հասնում է ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 121 սահմանակետին: Թիվ 121 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 122-123 սահմանակետերով անցնում 330 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 124 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, ապա հարավ-արևելք, հատելով ձորակը, դաշտային ճանապարհի թիվ 125-136 սահմանակետերով անցնում է 1105 մ, հասնում է դաշտային ճանապարհների հատման խաչմերուկում գտնվող թիվ 137 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, ճանապարհով անցնում 123 մ, հասնում թիվ 138 սահմանակետին: Թիվ 138 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Զինջուլու լքված բնակավայրի եզրով, թիվ 139 սահմանակետով անցնում 795 մ, հասնում է ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 140 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով բարձրանում, թիվ 141-144 սահմանակետերով անցնում 614 մ, հասնում ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 145 սահմանակետին: Թիվ 145 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորապտույտների թիվ 146-180 սահմանակետերով անցնում 3973 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լանջանիստ, Շաղափ և Պարույր Սևակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 33046 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱՌ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լանջառ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լուսաշող գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ուրցալանջ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Պարույր Սևակ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Լանջանիստ գյուղական համայնքին:

ԼԱՆՋԱՌ – ԼՈՒՍԱՇՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ա»-«Բ»

Լանջառ, Լուսաշող և Լանջանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է երկու ձորակների հատման կետում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 1-31 սահմանակետերով անցնելով 4156 մ, հասնում է Լանջառ, Լուսաշող և Ուրցալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4156 մ է:

ԼԱՆՋԱՌ – ՈՒՐՑԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»

Լանջառ, Ուրցալանջ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ և, դաշտային ճանապարհի թիվ 1-7 սահմանակետերով անցնելով 346 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնելով 156 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ, թիվ 11-15 սահմանակետերով անցնում 548 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 154 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 18-21 սահմանակետերով անցնում 674 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 23-29 սահմանակետերով անցնելով 596 մ, հասնում է թիվ 30

սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 314 մ, հատում է Լանջառ–Ուրցալանջ միջհամայնքային ճանապարհը, Լանջառ գետը, հասնում է Երասխ տանող խճուղային ճանապարհի եզրին գտնվող թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Երասխ տանող խճուղային ճանապարհով, թիվ 32-46 սահմանակետերով անցնում 1679 մ, հասնում է Լանջառ, Ուրցալանջ և Պարույր Սևակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4468 մ է:

ԼԱՆՋԱՌ – ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Գ»-«Դ»

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Պարույր Սևակ, Լանջառ գյուղական համայնքների սահմանների հետ:

ԼԱՆՋԱՌ – ԼԱՆՋԱՆԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Դ»-«Ա»

Լանջառ, Լանջանիստ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 436 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 135 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, հատում է ձորակը, կրկին թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 567 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-6 սահմանակետերով անցնում 428 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով ձորակներ և Լանջառ-Զինջուլու ճանապարհը, ձորակի թիվ 8-29 սահմանակետերով անցնում է 3415 մ, հասնում ձորակի եզրի թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 572 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 31 սահմանակետին, այնուհետև դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհի թիվ 32-39 սահմանակետերով անցնելով 1308 մ, հասնում է ճանապարհների խաչմերուկում գտնվող Լանջառ, Լանջանիստ և Պարույր Սևակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6861 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լուսաշող գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ջանգակատուն և «Բ»-«Գ» հատվածով՝ Վարդաշատ գյուղական համայնքներին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ուրցալանջ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Լանջառ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Լանջանիստ և «Զ»-«Է» հատվածով՝ Շաղափ գյուղական համայնքներին, հյուսիս-արևմուտքից «Է»-«Ա» հատվածով՝ Ուրցաձոր համայնքին:

ԼՈՒՍԱՇՈՂ – ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Լուսաշող, Ջանգակատուն և Ուրցաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» եռանկյունաչափական հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորակը, անցնում 1453 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 2-9 սահմանակետերով անցնում է 1105 մ, հասնում հաջորդ ձորակի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Այստեղից հին բնակավայրի միջով անցնող առվակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվակի թիվ 11-17 սահմանակետերով անցնում 1221 մ, հասնում է Վեդի գետի ձախակողմյան վտակի հետ հատման կետում գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը Վեդի գետի ձախակողմյան վտակով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, հատում ձորակները, թիվ 19-54 սահմանակետերով անցնում 5203 մ, հասնում է թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնում, 590 մ, հասնում է 2542.5 մ միջ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 56 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 57-59 սահմանակետերով անցնում 2779 մ, հասնում է թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք,

հարավ, ապա կրկին հարավ-արևմուտք, թիվ 61-63 սահմանակետերով անցնում 2299 մ, հասնում է ջրբաժանի մոտ գտնվող Լուսաշող, Վարդաշատ և Զանգակատուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14650 մ է:

ԼՈՒՍԱՇՈՂ – ՎԱՐԴԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Լուսաշող, Զանգակատուն և Վարդաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրբաժանի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, անցնում 1011 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1053 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 3 սահմանակետով անցնում 1087 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևմուտք, ճանապարհով, թիվ 5 սահմանակետով անցնում 765 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 345 մ, հասնում է Լուսաշող, Վարդաշատ և Ուրցալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4262 մ է:

ԼՈՒՍԱՇՈՂ – ՈՒՐՑԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Լուսաշող, Ուրցալանջ և Վարդաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1401 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, հետո թեքվում է դեպի արևմուտք, անցնում 92 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնելով 451 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 237 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ծորակի թիվ 9-11 սահմանակետերով անցնում 516 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի

արևմուտք, թիվ 13-15 սահմանակետերով անցնելով 618 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 17-19 սահմանակետերով 498 մ, հասնում է Լուսաշող, Ուրցալանջ և Լանջառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3812 մ է:

ԼՈՒՍԱՇՈՂ – ԼԱՆՋԱՌ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Լուսաշող, Լանջառ և Լանջանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է երկու ձորակների հատման կետում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 1-31 սահմանակետերով անցնելով 4156 մ, հասնում է Լուսաշող, Լանջառ և Ուրցալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4156 մ է:

ԼՈՒՍԱՇՈՂ – ԼԱՆՋԱՆԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Առվի եզրին գտնվող Լուսաշող, Լանջանիստ և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 958 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղ հատում է ձորակը, թեքվում դեպի հարավ-արևմուտք, հին գյուղատեղի ավերակներով, թիվ 3 սահմանակետով անցնում 1085 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև հատելով դաշտային ճանապարհը, սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 653 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, այստեղից ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 318 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 159 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանի թիվ 9-11 սահմանակետերով անցնում 1218 մ, հասնում է 2383.1 մ նիշ ունեցող բարձունքին գտնվող թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ժայռի եզրով անցնում 1403 մ, հասնում է 2482.6 մ

նիշ ունեցող բարձունքին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը քիչ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 388 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 711 մ, հասնում 2422.0 մ նիշ ունեցող բարձունքին գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 974 մ, հասնում է 2295.2 մ նիշ ունեցող ժայռի թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 407 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում ձորակը, լանջով անցնում 384 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 326 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 59 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 855 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 248 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 473 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 387 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 27-28 սահմանակետերով անցնում 686 մ, հատում Լուսաշող-Շաղափ միջհամայնքային ճանապարհը, հասնում է Սելավ գետի եզրին գտնվող թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Սելավ գետով, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 602 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 33-34 սահմանակետերով անցնում 1176 մ, հասնում է երկու ձորերի հատման տեղում գտնվող Լանջառ, Լանջանիստ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13472 մ է:

ԼՈՒՍԱՇՈՂ – ՇԱՂԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Է»

Լուսաշող, Շաղափ և Ուրցածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 1-2 սահմանակետերով անցնում

2420 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 748 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 1071 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ, 1729.5 մ նիշով բարձունքի արևմտյան լանջով հատելով հանրապետական նշանակության ճանապարհը, թիվ 6 սահմանակետով անցնում է 1937 մ, հասնում Վեդի գետի ձախակողմյան ավին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 586 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 957 մ, հասնում է Վեդի գետի ձախակողմյան վտակի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, Վեդի գետի վտակով, 1712 մ նիշ ունեցող բարձունքի արևելյան կողմով և թիվ 12-14 սահմանակետերով անցնում 711 մ, հասնում է 2383 մ նիշով սարի գագաթին գտնվող թիվ 15 սահմանակետին, այստեղից սահմանագիծը վերը նշված վտակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, հատում ձորակը և, թիվ 16-23 սահմանակետերով անցնելով 1636 մ, հասնում է առվի եզրին գտնվող Շաղափ, Լուսաշող և Լանջանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10067 մ է:

ԼՈՒՍԱՇՈՂ – ՈՒՐԳԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Է» - «Ա»

Լուսաշող, Ուրցածոր և Ջանգակատուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» եռանկյունաչափական հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում է 1729 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 3 սահմանակետով անցնում է 866 մ, հասնում Ուրցածոր, Լուսաշող և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2594 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՈՒԿԱՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղուկասավան գյուղատնտեսական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գետափնյա գյուղական համայնքին, հարավ-արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Դարակերտ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Դաշտավան գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Խաչփառ և «Ե»-«Զ» հատվածով՝ Ագատաշեն գյուղական համայնքներին, հյուսիս-արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Գեղանիստ գյուղական համայնքին:

ԴՈՒԿԱՍԱՎԱՆ - ԳԵՏԱՓՆՅԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Ղուկասավան, Գետափնյա և Գեղանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Հրազդան գետի ափին և ոռոգման առվի սկզբնակետում, սահմանագիծը ոռոգման առվով թեքվում է դեպի հարավ, հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 685 մ, հասնում է Գետափնյա-Ղուկասավան միջհամայնքային ճանապարհի և առվի հատման տեղում գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, ոռոգման ջրատարով, թիվ 5-13 սահմանակետերով անցնում 1341 մ, հասնում է Ղուկասավան, Գետափնյա և Դարակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2026 մ է:

ԴՈՒԿԱՍԱՎԱՆ – ԴԱՐԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Ղուկասավան, Դարակերտ և Դաշտավան համայնքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ցամաքուրդով անցնում է դեպի

արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 804 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 3-10 սահմանակետերով անցնում 1570 մ, հասնում է ոռոգման ջրանցքի եզրին գտնվող Ղուկասավան, Դարակերտ և Գետափնյա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2374 մ է:

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ – ՂԱՇՏԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Ղուկասավան, Խաչփառ և Դաշտավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ցամաքուրդով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 304 մ, հասնում Ղուկասավան, Դաշտավան և Դարակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային կետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 304 մ է:

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ – ԽԱՉՓԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Հրազդան գետի ափին գտնվող Ղուկասավան, Ազատաշեն և Խաչփառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Հրազդան գետով, թիվ 1-21 սահմանակետերով անցնում 2301 մ, հասնում Ղուկասավան, Խաչփառ և Դաշտավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2301 մ է:

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ - ԱԶԱՏԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Ղուկասավան, Ազատաշեն, Գեղանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Հրազդան գետի ափին, սահմանագիծը Հրազդան գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 699 մ, հասնում Հրազդան գետի ափին գտնվող Ղուկասավան, Ազատաշեն և Խաչփառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 699 մ է:

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ - ԳԵՂԱՆԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ա»

Ղուկասավան, Գետափնյա և Գեղանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Հրազդան գետի ափին, սահմանագիծը Հրազդան գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 181 մ, հասնում Հրազդան գետի ափին գտնվող Ղուկասավան, Ազատաշեն և Գեղանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին: «Զ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 181 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱՎԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նարեկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Քաղցրաշեն համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Բ»-«Ա» հատվածով՝ Նորաշեն համայնքին:

ՆԱՐԵԿ-ՔԱՂՑՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Ղաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող Նարեկ, Քաղցրաշեն և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 5735 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 734 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, արևմուտք, նորից հարավ-արևմուտք, գետով անցնում 7244 մ, հասնում գետի և ղաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ղաշտային ճանապարհի թիվ 4-9 սահմանակետերով անցնում 1001 մ, հասնում է ղաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ղաշտային ճանապարհի թիվ 11-27 սահմանակետերով անցնում 1435 մ, հասնում ղաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, Խոսրովի արգելանոցի սահմանագծի թիվ 29-30 սահմանակետերով անցնում 813 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 1741 մ, հասնում ձորի և ղաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, ղաշտային ճանապարհի ոլորապտույտների թիվ 33-176

սահմանակետերով անցնում 12007 մ, հասնում դաշտային ճանապարհի և ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 177 սահմանակետին: Թիվ 177 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, այնուհետև հյուսիս-արևմուտք, ջրանցքով, թիվ 178-214 սահմանակետերով անցնում 6883 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 215 սահմանակետին: Թիվ 215 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 216-220 սահմանակետերով անցնում 1059 մ, հասնում է թիվ 221 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 85 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 222 սահմանակետին: Թիվ 222 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս, թիվ 223 սահմանակետով անցնում 64 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 224 սահմանակետին: Թիվ 224 սահմանակետից սահմանագիծը ոռոգման առվով թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 225-226 սահմանակետերով անցնում 533 մ, հասնում թիվ 227 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, ձորակով անցնում 112 մ, հասնում թիվ 228 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևմուտք, անցնում 24 մ, հասնում Քաղցրաշեն-Նարեկ ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 229 սահմանակետին: Թիվ 229 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, թիվ 230-231 սահմանակետերով անցնում է 302 մ, հասնում է Դվինի ջրանցքի և ձորակի հատման կետում գտնվող թիվ 232 սահմանակետին: Թիվ 232 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, Դվինի ջրանցքի ոլորապտույտների թիվ 233-247 սահմանակետերով անցնում է 1643 մ, հասնում է ջրանցքի հյուսիսային ափին գտնվող Նարեկ, Քաղցրաշեն և Նորաշեն համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի երկարությունը 41417 մ է:

ՆԱՐԵԿ-ՆՈՐԱՇԵՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Ա»

Դաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող Նարեկ, Նորաշեն և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 13424 մ, հասնում է գետի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհի թիվ 2-28 սահմանակետերով անցնելով 1878 մ, հասնում է դաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող թիվ 29 սահմանակետին:

Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, գետով անցնում 1441 մ, հասնում է գետի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 30 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 31-49 սահմանակետերով անցնում 1674 մ, հասնում է դաշտային ճանապարհի և Խոսրովի արգելոցի սահմանագծի հատման տեղում գտնվող թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, Խոսրովի արգելոցի սահմանագծով անցնում 791 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 51 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորանների թիվ 52-76 սահմանակետերով անցնում 2620 մ. հասնում է ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 77 սահմանակետին: Թիվ 77 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորով անցնում 1505 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 78 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի ոլորանների թիվ 79-198 սահմանակետերով անցնում 7316 մ, հասնում է ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 199 սահմանակետին: Թիվ 199 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև հարավ-արևմուտք, ձորով թիվ 200-214 սահմանակետերով անցնում 5159 մ, հասնում է ձորի և ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 215 սահմանակետին: Թիվ 215 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրանցքով, թիվ 216-217 սահմանակետերով անցնում 1121 մ, հասնում է ջրանցքի եզրին գտնվող թիվ 218 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 219 սահմանակետով անցնում 205 մ, հասնում է թիվ 220 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 73 մ, հասնում է թիվ 221 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 222 սահմանակետով 405 մ, հասնում է թիվ 223 սահմանակետին: Թիվ 223 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ անցնում է թիվ 224-226 սահմանակետերով 1499 մ, հասնում է թիվ 227 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 125 մ, հասնում է թիվ 228 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 229-232 սահմանակետերով անցնում 830 մ, հասնում է թիվ 233 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 193 մ, հասնում է թիվ 234 սահմանակետին, որտեղ հատում է Դվինի ջրանցքը, թեքվում դեպի հարավ-արևելք և ջրանցքի հյուսիսային ափով անցնում թիվ 235-238 սահմանակետերով անցնում 431 մ, հասնում է թիվ 239 սահմանակետին: Թիվ 239 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ,

անցնում 92 մ, հասնում է թիվ 240 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 111 մ, հասնում թիվ 241 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 161 մ, հասնում է առվի վրա գտնվող Նարեկ, Նորաշեն և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Ա» սահմանագծի ընդամուր երկարությունը 41110 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորաբաց գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Նորաբաց համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Երևան քաղաքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Այնթապ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Մասիս քաղաքային համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Դարակերտ գյուղական համայնքին:

ՆՈՐԱԲԱՑ -ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի մարզի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ՆՈՐԱԲԱՑ-ԱՅՆԹԱՊ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Նորաբաց Այնթապ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ոռոգման առուների հատման կետում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 1- 51 սահմանակետերով անցնում 2094 մ, հասնում է ցամաքուրդի և ոռոգման առուների հատման կետում գտնվող Նորաբաց, Այնթապ գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2094 մ է

ՆՈՐԱԲԱՑ - ՄԱՍԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Նորաբաց, Դարակերտ գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 235 մ,

հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 85 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 6-9 սահմանակետերով անցնում 1311 մ, հասնում է ցամաքուղիի և ոռոգման առուների հատման կետում գտնվող Նորաբաց, Այնթապ գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1632 մ է:

ՆՈՐԱԲԱՑ-ԴԱՐԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Նորաբաց, Դարակերտ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ճանապարհով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 342 մ, հասնում է սելավատարի և ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, առվով, թիվ 5-33 սահմանակետերով անցնում 1416 մ, հասնում է Նորաբաց-Մասիս միջգյուղյա ճանապարհի եզրին գտնվող Նորաբաց, Դարակերտ գյուղական և Մասիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1758 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Քաղցրաշեն գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Նարեկ, «Գ»-«Դ» հատվածով՝ Քաղցրաշեն և «Դ»-«Ե» հատվածով՝ Այգեզարդ գյուղական համայնքներին, հարավից և արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Վերին Արտաշատ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Դվին գյուղական համայնքին, հյուսիսից «Է»-«Ա» հատվածով՝ Վերին Դվին գյուղական համայնքին:

ՆՈՐԱՇԵՆ – ՔԱՂՑՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Դաշտային ճանապարհների հատման տեղում Նորաշեն, Քաղցրաշեն և Վերին Դվին տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 2130 մ, հասնում դաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող Նորաշեն, Քաղցրաշեն և Նարեկ համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի երկարությունը 2130 մ է:

ՆՈՐԱՇԵՆ – ՆԱՐԵԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Գետի եզրին գտնվող Նորաշեն, Նարեկ և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 13424 մ, հասնում է գետի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհի թիվ 2-28 սահմանակետերով անցնելով 1878 մ, հասնում է դաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, գետով անցնում 1441 մ, հասնում է գետի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 30 սահմանակետին,

այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 31-49 սահմանակետերով անցնում 1674 մ, հասնում է դաշտային ճանապարհի և Խոսրովի արգելոցի սահմանագծի հատման տեղում գտնվող թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, Խոսրովի արգելոցի սահմանագծով անցնում 791 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 51 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորանների թիվ 52-76 սահմանակետերով անցնում 2620 մ, հասնում է ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 77 սահմանակետին: Թիվ 77 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորով անցնում 1505 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 78 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի ոլորանների թիվ 79-198 սահմանակետերով անցնում 7316 մ, հասնում է ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 199 սահմանակետին: Թիվ 199 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև հարավ-արևմուտք, ձորով թիվ 200-214 սահմանակետերով անցնում 5159 մ, հասնում է ձորի և ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 215 սահմանակետին: Թիվ 215 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրանցքով, թիվ 216-217 սահմանակետերով անցնում 1121 մ, հասնում է ջրանցքի եզրին գտնվող թիվ 218 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 219 սահմանակետով անցնում 205 մ, հասնում է թիվ 220 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 73 մ, հասնում է թիվ 221 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 222 սահմանակետով 405 մ, հասնում է թիվ 223 սահմանակետին: Թիվ 223 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ անցնում է թիվ 224-226 սահմանակետերով 1499 մ, հասնում է թիվ 227 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 125 մ, հասնում է թիվ 228 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 229-232 սահմանակետերով անցնում 830 մ, հասնում է թիվ 233 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 193 մ, հասնում է թիվ 234 սահմանակետին, որտեղ հատում է Դվինի ջրանցքը, թեքվում դեպի հարավ-արևելք և ջրանցքի հյուսիսային ափով, թիվ 235-238 սահմանակետերով անցնում 431 մ, հասնում է թիվ 239 սահմանակետին: Թիվ 239 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 92 մ, հասնում է թիվ 240 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 111 մ, հասնում է թիվ 241 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 161 մ, հասնում

է առվի վրա գտնվող Նորաշեն, Նարեկ և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 41110 մ է:

ՆՈՐԱՇԵՆ – ՔԱՂՑՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Գ» - «Դ»

Ջրանցքի հյուսիսային ափին գտնվող Նորաշեն, Քաղցրաշեն և Նարեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 137 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 143 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի թիվ 3-7 սահմանակետերով անցնում 1050 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, անցնում է 157 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, բետոնե կիսախողովակով, թիվ 10-17 սահմանակետերով հատելով Նորաշեն-Քաղցրաշեն ավտոճանապարհը, անցնում է 1964 մ, հասնում է Նորաշեն, Քաղցրաշեն և Այգեզարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի երկարությունը 3451 մ է:

ՆՈՐԱՇԵՆ – ԱՅԳԵԶԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Դ» - «Ե»

Նորաշեն, Այգեզարդ և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 94 մ, հասնում է բետոնե կիսախողովակի մոտ գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, բետոնյա կիսախողովակով, թիվ 2 սահմանակետով անցնում 878 մ, հասնում է Նորաշեն, Այգեզարդ և Վերին Արտաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 972 մ է:

ՆՈՐԱՇԵՆ – ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Նորաշեն, Դվին և Վերին Արտաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 410 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, հատում Նորաշեն-Վերին Արտաշատ միջհամայնքային ճանապարհը, անցնում 151 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ոռոգման առվի թիվ 6-9 սահմանակետերով անցնում 760 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 11 սահմանակետով անցնում 397 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 73 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 151 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-17 սահմանակետերով անցնում 687 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19 սահմանակետով անցնում 176 մ, հասնում Նորաշեն, Այգեգարդ և Վերին Արտաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2807 մ է:

ՆՈՐԱՇԵՆ – ԴՎԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ե»

Նորաշեն, Դվին և Վերին Դվին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի հունով, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1066 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, Նորաշենի դպրոցի կողքով թիվ 6-7 սահմանակետերով անցնում 244 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով հատելով Դվին-Վերին Արտաշատ ավտոճանապարհը, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 352 մ, հասնում է Նորաշեն, Դվին և Վերին Արտաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Ե» սահմանագծի երկարությունը 1662 մ է:

ՆՈՐԱՇԵՆ – ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է» - «Ա»

Նորաշեն, Վերին Դվին և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 1-8 սահմանակետերով անցնում 925 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհի թիվ 10 սահմանակետով անցնում 196 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 12-36 սահմանակետերով անցնում 3616 մ, հասնում է դաշտային ճանապարհի և ձորի հատման կետում գտնվող թիվ 37 սահմանակետին, որտեղ հատում է ձորը, թեքվում դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 38-50 սահմանակետերով անցնում 1964 մ, հասնում դաշտային ճանապարհի և գետի հատման կետում գտնվող թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, գետով, թիվ 52-149 սահմանակետերով անցնում 808 մ, հասնում թիվ 150 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, գետի ոլորանների թիվ 151-157 սահմանակետերով անցնում 6295 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 158 սահմանակետին: Թիվ 158 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, դաշտային ճանապարհի թիվ 159-175 սահմանակետերով անցնում 2047 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 176 սահմանակետին: Թիվ 176 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Խոսրովի արգելոցի եզրագծի թիվ 177 սահմանակետով անցնում 750 մ, հասնում է թիվ 178 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 179-180 սահմանակետերով անցնում 593 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 181 սահմանակետին: Թիվ 181 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 182-188 սահմանակետերով անցնում 1799 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 189 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհի թիվ 190-192 սահմանակետերով անցնում 531 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 193 սահմանակետին: Թիվ 193 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, նույն դաշտային ճանապարհի ոլորանների

թիվ 194-216 սահմանակետերով անցնում 2771 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 217 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 218-222 սահմանակետերով անցնում 1058 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 223 սահմանակետին: Թիվ 223 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորի թիվ 224 սահմանակետով անցնում 646 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 225 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների գագաթներով թիվ 226-227 սահմանակետերով անցնում 1672 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 228 սահմանակետին, որտեղից շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 229 սահմանակետով անցնում 470 մ, հասնում ձորում գտնվող թիվ 230 սահմանակետին: Թիվ 230 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 3589 մ, հասնում ձորի թիվ 231 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 432 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 232 սահմանակետին, այդտեղից շարունակվելով նույն ուղղությամբ, հատում է գետը, անցնում 657 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 233 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 234 սահմանակետով անցնում 695 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 235 սահմանակետին: թիվ 235 սահմանակետից սահմանագիծը ձորակով անցնում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 359 մ, հասնում թիվ 236 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 178 մ, հասնում թիվ 237 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 238-239 սահմանակետերով անցնում 560 մ, հասնում թիվ 240 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 241 սահմանակետով անցնում 324 մ, հասնում թիվ 242 սահմանակետին: Թիվ 242 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 243-247 սահմանակետերով անցնում 1226 մ, հասնում ձորակի և Դվինի ջրանցքի հատման կետում գտնվող թիվ 248 սահմանակետին: Թիվ 248 սահմանակետից սահմանագիծը Դվինի ջրանցքի հունով անցնում է դեպի հարավ-արևելք 68 մ, հասնում ձորակի թիվ 249 սահմանակետին, այստեղից թեքվում դեպի հարավ-արևմուտք, ձորակի թիվ 250-251 սահմանակետերով անցնում 666 մ, հասնում թիվ 252 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 30 մ, հասնում թիվ 253 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 271 մ, հասնում կիսախողովակի թիվ 254 սահմանակետին: Թիվ 254 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, կիսախողովակով, թիվ 255 սահմանակետով անցնում 447 մ, հասնում ջրանցքի և կիսախողովակի հատման կետում գտնվող թիվ 256 սահմանակետին, որտեղից

ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 257-265 սահմանակետերով անցնում 1200 մ, հասնում ջրանցքի և ոռոգման առվի հատման կետում գտնվող թիվ 266 սահմանակետին: Թիվ 266 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 267 սահմանակետով անցնում 334 մ, հասնում թիվ 268 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հուսիս-արևմուտք, թիվ 269-270 սահմանակետերով անցնում 736 մ, հասնում թիվ 271 սահմանակետին, շարունակվում է նույն ուղղությամբ, հատելով ձորակը, ապա Նորաշեն-Քաղցրաշեն ավտոճանապարհը, անցնելով թիվ 272-276 սահմանակետերով 1925 մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 277 սահմանակետին, որտեղից ոռոգման առվով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 28 մ, հասնում Նորաշեն, Վերին Դվին և Դվին համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» -«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 43867 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոր Խարբերդ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Երևան քաղաքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Նոր Կյուրիին գյուղական համայնքին և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Այնթապ գյուղական համայնքին:

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ - ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ -ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Արտաշատի ջրանցքի եզրին գտնվող Նոր Խարբերդ, Նոր Կյուրիին գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ոռոգման առվով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1367 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 153 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք և ոռոգման առվով, թիվ 10-16 սահմանակետերով անցնում 1684 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 96 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 19 սահմանակետով անցնում 624 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 217 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 22-25 սահմանակետերով անցնում 639 մ, հասնում Այնթապ տանող ճանապարհի եզրին գտնվող Նոր Խարբերդ, Մարմարաշեն և Նոր Կյուրիին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4780 մ է:

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ - ԱՅՆԹԱՊ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Ա»

Նոր Խարբերդ, Այնթապ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Այնթապ բնակավայրի հյուսիսարևելյան մասում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Այնթապ բնակավայրի արևելյան սահմանով անցնող առվով, թիվ 1-18 սահմանակետերով անցնում 1509 մ, հասնում Երևան-Մարմարաշեն խճուղային ճանապարհի և առվի հատման կետում գտնվող թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ Երևան-Մարմարաշեն ճանապարհով, թիվ 20-26 սահմանակետերով անցնում 3329 մ, հասնում Մարմարաշեն - Այնթապ միջգյուղյա ճանապարհի եզրին գտնվող Նոր Խարբերդ, Այնթապ և Նոր Կյուրիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4838 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոր Կյուրին գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Երևան քաղաքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ջրաշեն գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ջրահովիտ գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Մարմարաշեն գյուղական համայնքին, հյուսիսից և արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Նոր Խարբերդ գյուղական համայնքին:

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ – ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ – ՋՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Նոր Կյուրին, Ջրաշեն գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Արտաշատի շրջանցքի ծնկաձև շրջադարձի մոտ՝ կամրջի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Արտաշատի ջրանցքով, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 600 մ, հասնում Արտաշատի ջրանցքի և դաշտային ճանապարհների հատման կետի կամրջի մոտ գտնվող Նոր Կյուրին, Ջրաշեն և Ջրահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 600 մ է:

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ – ՋՐԱՅՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Արտաշատի ջրանցքի և դաշտային ճանապարհների հատման կետի կամրջի մոտ գտնվող Նոր Կյուրին, Ջրահովիտ և Ջրաշեն գյուղական համայնքների տարածքների

բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 374 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում թիվ 2 սահմանակետով 212 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ոռոգման առվով, թիվ 4-12 սահմանակետերով անցնում 828 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14-16 սահմանակետերով անցնում է 1072 մ, հասնում է Նոր Կյուրին, Ջրահովիտ և Մարմարաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2486 մ է:

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ - ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ» - «Ե»

Նոր Կյուրին, Մարմարաշեն և Նոր Խարբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Այնթապ տանող ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 2883 մ, հասնում է Նոր Կյուրին, Ջրահովիտ և Մարմարաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2883 մ է:

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ –ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Ա»

Արտաշատի ջրանցքի եզրին գտնվող Նոր Կյուրին, Նոր Խարբերդ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ոռոգման առվով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1367 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 153 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ոռոգման առվով, թիվ 10-16 սահմանակետերով անցնում 1684 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք անցնում 96 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 19 սահմանակետով անցնում 624 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 217 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա

հյուսիս-արևմուտք, թիվ 22-25 սահմանակետերով անցնում 639 մ, հասնում Այնթապ տանող ճանապարհի եզրին գտնվող Նոր Կյուրիև, Մարմարաշեն և Նոր Խարբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4780 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոր ուղի գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գինեվետ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Սիսավան գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Նոր կյանք համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Տափերական համայնքին:

ՆՈՐ ՈՒՂԻ - ԳԻՆԵՎԵՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Նոր ուղի, Տափերական և Գինեվետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ոռոգման առվի և դաշտային ճանապարհի հատման կետում, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով անցնում է 231 մ, հասնում է դաշտային ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, ճանապարհով անցնում 371 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, Նոր ուղի համայնքի բնակավայրի արևմտյան սահմանով անցնում 1034 մ, հասնում է Արտաշատի ջրանցքի ձախակողմյան եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում է 418 մ, հասնում է Արտաշատի ջրանցքի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա նորից թեքվելով հարավ-արևելք, անցնելով 236 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևմուտք և անցնելով 458 մ, հասնում է Արտաշատի ջրանցքի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը Արտաշատի ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 646 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 107 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 197 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 351 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 150 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11

սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 502 մ, հասնում է Արտաշատի ջրանցքի եզրի թիվ 12 սահմանակետին, որտեղից Արտաշատի ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1101 մ, հասնում է Նոր ուղի, Սիսավան և Գինեվետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5782 մ է:

ՆՈՐ ՈՒՂԻ -ՍԻՍԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»

Նոր Ուղի, Սիսավան և Նոր կյանք համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է առվի և երկաթգծի հատման կետում, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, առվով անցնում է 251 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 2-6 սահմանակետերով անցնում է 620 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, առվի թիվ 8-9 սահմանակետերով անցնում 355 մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, այնուհետև առվով թեքվում է դեպի արևելք, թիվ 11-19 սահմանակետերով անցնում է 1640 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 177 մ, հասնում Արտաշատի ջրանցքի եզրին գտնվող Նոր ուղի, Գինեվետ և Սիսավան համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի երկարությունը 3042 մ է:

ՆՈՐ ՈՒՂԻ - ՆՈՐ ԿՅԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»

Նոր ուղի, Տափերական և Նոր կյանք համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի և առվի հատման կետում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Երևան-Երասխ երկաթգծով անցնում 254 մ, հասնում առվի և երկաթգծի հատման կետում գտնվող Նոր ուղի, Սիսավան և Նոր կյանք համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի երկարությունը 254 մ է:

ՆՈՐ ՈՒՂԻ - ՏԱՓԵՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Նոր ուղի, Գինեվետ և Տափերական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ոռոգման առվի և դաշտային ճանապարհի հատման կետում սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ոռոգման առվով, թիվ 1 սահմանակետով անցնում 405 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 3-6 սահմանակետերով անցնում 830 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, ոռոգման առվի թիվ 8-10 սահմանակետերով անցնում 438 մ, հասնում է դաշտային ճանապարհի և առվի հատման կետում գտնվող Նոր ուղի, Տափերական և Նոր կյանք համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի երկարությունը 1673 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շահույնյան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վերին Արտաշատ և «Բ»-«Գ» հատվածով՝ Այգեպատ գյուղական համայնքներին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Տափերական գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Փոքր Վեդի գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ պետական սահմանին (Թուրքիայի Հանրապետություն), արևմուտքից, հյուսիս-արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Արտաշատ քաղաքային համայնքին:

ՇԱՀՈՒՄՅԱՆ - ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Շահույնյան, Վերին Արտաշատ գյուղական և Արտաշատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Արտաշատի ջրանցքով, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 333 մ, հասնում Շահույնյան, Վերին Արտաշատ և Այգեպատ համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 333 մ է:

ՇԱՀՈՒՄՅԱՆ - ԱՅԳԵՊԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Շահույնյան, Վերին Արտաշատ և Այգեպատ համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Արտաշատի ջրանցքով, թիվ 1-18 սահմանակետերով անցնելով 3735 մ, հատելով Շահույնյան-Այգեպատ խճուղային ճանապարհը, հասնում է Շահույնյան, Այգեպատ և Տափերական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3735 մ է:

ՇԱՀՈՒՄՅԱՆ - ՏԱՓԵՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Շահունյան, Այգեպատ և Տափերական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով, թիվ 1 սահմանակետով անցնում 870 մ, հասնում է Երևան-Երասխ երկաթգծի և առվի հատման կետում գտնվող թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 819 մ, հասնում առվի և երկաթգծի հատման կետում գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ոռոգման առվով, թիվ 4 սահմանակետով անցնում 1118 մ, հասնում է Շահունյան-Տափերական ճանապարհի հետ հատման կետում գտնվող թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Շահունյան-Տափերական խճուղային ճանապարհով անցնում 848 մ, հասնում է առվի և ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 2526 մ, հասնում Շահունյան, Տափերական և Փոքր Վեղի համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6183 մ է:

ՇԱՀՈՒՄՅԱՆ - ՓՈՔՐ ՎԵՂԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Շահունյան, Տափերական և Փոքր Վեղի համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով, առվով անցնում 2253 մ, հասնում Շահունյան, Փոքր Վեղի համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2253 մ է:

ՇԱՀՈՒՄՅԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

«Ե»-«Զ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՇԱՀՈՒՄՅԱՆ - ԱՐՏԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ» - «Ա»

Շահույնյան, Վերին Արտաշատ գյուղական և Արտաշատ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրատար առվով, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 2045 մ, հասնում Արտաշատ-Շահույնյան խճուղային ճանապարհի և կիսախողովակների հատման տեղում գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հին խճուղու ոլորանների թիվ 8-11 սահմանակետերով անցնելով 312 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ճանապարհով անցնում 370 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհով անցնում 727 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15 սահմանակետով անցնում 580 մ, հասնում Արարատ-Արտաշատ մայրուղու հետ հատման կետում գտնվող թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Արարատ-Արտաշատ մայրուղով անցնում 1125 մ, հասնում է Արարատ-Արտաշատ մայրուղու և ցամաքուրդի հատման տեղում գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ցամաքուրդով, անցնում 535 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ցամաքուրդով, թիվ 19-20 սահմանակետերով անցնելով 338 մ, հասնում է ցամաքուրդի հետ հատման կետում գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում ցամաքուրդով 552 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, ցամաքուրդի խրամուղու արևմտյան ափով անցնում 281 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 571 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, խրամուղու արևմտյան եզրով և թիվ 25 սահմանակետով անցնելով 653 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, խրամուղու արևելյան եզրով անցնում 572 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք և, խրամուղու հյուսիսային ափով անցնելով 230 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 393 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հետո հարավ-արևմուտք, թիվ 30 սահմանակետով անցնում 741 մ,

հասնում է Շահումյան գյուղական, Արտաշատ քաղաքային համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10024 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՓ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շաղափ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լուսաշող, «Բ»-«Գ» հատվածով՝ Լանջանիստ գյուղական համայնքներին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Երասխ, «Դ»-«Ե» հատվածով՝ Արմաշ գյուղական համայնքներին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Սուրենավան գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Արարատ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Է»-«Ա» հատվածով՝ Ուրցաձոր գյուղական համայնքին:

ՇԱՂԱՓ - ԼՈՒՍԱՇՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Շաղափ, Լուսաշող և Ուրցաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 2420 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 748 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 1071 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ, 1729.5 մ նիշով բարձունքի արևմտյան լանջով հատելով հանրապետական նշանակության ճանապարհը, թիվ 6 սահմանակետով անցնում է 1937 մ, հասնում Վեդի գետի ձախակողմյան ափին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 586 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 957 մ, հասնում Վեդի գետի ձախակողմյան վտակի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, Վեդի գետի վտակով, 1712 մ նիշ ունեցող բարձունքի արևելյան կողմով և թիվ 12-14 սահմանակետերով անցնելով 711 մ, հասնում է 2383 մ նիշով սարի գագաթին գտնվող թիվ 15 սահմանակետին, այստեղից սահմանագիծը վերը նշված վտակով թեքվում է

դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, հատում ձորակը և թիվ 16-23 սահմանակետերով անցնելով 1636 մ, հասնում է առվի եզրին գտնվող Շաղափ, Լուսաշող և Լանջանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10067 մ է:

ՇԱՂԱՓ - ԼԱՆՋԱՆԻՍՏ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Շաղափ, Լանջանիստ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է առվի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 644 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, աղբյուրի մոտով, դաշտային ճանապարհի թիվ 4-11 սահմանակետերով անցնում 2204 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին, այստեղից նույն ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս, այնուհետև հյուսիս-արևմուտք, հարավ-արևմուտք և կրկին հյուսիս-արևմուտք, Աղբուլաղ քանդված գյուղատեղի մոտով և ճանապարհների ոլորանների թիվ 13-28 սահմանակետերով անցնելով 3500 մ, հասնում է 2088 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, քանդված ֆերմաների հյուսիսային եզրագծով անցնում 592 մ, հասնում Վեդի գետի ձախակողմյան վտակի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին, այստեղից նշված վտակով շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, վտակի թիվ 31-32 սահմանակետերով անցնում 638 մ, հասնում վտակի եզրի թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, լանջով, թիվ 34-35 սահմանակետերով անցնում 1948 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 36 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 454 մ, հասնում Ժայռի եզրին գտնվող թիվ 37 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, Ժայռերի եզրերով թիվ 38-41 սահմանակետերով անցնելով 688 մ, հասնում է Ժայռի կատարին գտնվող թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 43 սահմանակետով անցնում 319 մ, հասնում թիվ 44 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև դեպի հարավ-արևմուտք, լանջերով և

գագաթներով, թիվ 45-52 սահմանակետերով անցնելով 2249 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բլրի արևելյան լանջով, թիվ 54 սահմանակետով անցնում 1710 մ, հասնում թիվ 55 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 146 մ, հասնում թիվ 56 սահմանակետին: Թիվ 56 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակով անցնում 506 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին, այստեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 668 մ, հասնում թիվ 58 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 59-63 սահմանակետերով անցնում 568 մ, հասնում թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 319 մ, հասնում ձորակի եզրի թիվ 65 սահմանակետին, ապա շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 66-67 սահմանակետերով անցնում է 2037 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 68 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 83 մ, հասնում թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորակով, ապա հին առվով հատում Շաղափ-Լուսաշող խճուղային ճանապարհը, հասնում է կամրջին, այստեղից խճուղով հասնում է առաջին ձորակի կամրջին, այնուհետև ձորակի ոլորապտույտների թիվ 70-95 սահմանակետերով անցնելով 3952 մ, հասնում է ձորակների հատման կետում գտնվող թիվ 96 սահմանակետին: Թիվ 96 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ձորի թիվ 97-101 սահմանակետերով անցնում է 992 մ, հասնում Ժայռի եզրին գտնվող թիվ 102 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորը, անցնում է 748 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 103 սահմանակետին: Թիվ 103 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, ապա նորից հարավ-արևմուտք, ձորի թիվ 104-120 սահմանակետերով անցնում 1479 մ, հասնում ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 121 սահմանակետին: Թիվ 121 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 122-123 սահմանակետերով անցնում 330 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 124 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, ապա հարավ-արևելք, հատելով ձորակը, դաշտային ճանապարհի թիվ 125-136 սահմանակետերով անցնում է 1105 մ, հասնում դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 137 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք,

ճանապարհով անցնում 123 մ, հասնում թիվ 138 սահմանակետին: Թիվ 138 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Ջինջուլու քանդված բնակավայրի եզրով, թիվ 139 սահմանակետով անցնելով 795 մ, հասնում Ջինջուլու բնակավայրի, ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 140 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով բարձրանում, թիվ 141-144 սահմանակետերով անցնում 614 մ, հասնում ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 145 սահմանակետին: Թիվ 145 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորապտույտների թիվ 146-180 սահմանակետերով անցնում 3973 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լանջանիստ, Շաղափ և Պարույր Սևակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 33046 մ է:

ՇԱՂԱՓ - ԵՐԱՍԽ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Շաղափ, Երասխ և Արմաշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, նշված ճանապարհի թիվ 1-16 սահմանակետերով անցնում 1707 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Շաղափ, Երասխ և Լանջանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1707 մ է:

ՇԱՂԱՓ – ԱՐՄԱՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Շաղափ, Արմաշ և Սուրենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 1-27 սահմանակետերով անցնելով 2788 մ, հասնում է ճանապարհի եզրի Շաղափ, Արմաշ և Երասխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2788 մ է:

ՇԱՂԱՓ - ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Շաղափ, Սուրենավան և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 1-15 սահմանակետերով անցնում 2267 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անցնում 150 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում 934 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 466 մ, հասնում դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով թեքվում հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 21-47 սահմանակետերով անցնում 3680 մ, հասնում Շաղափ, Սուրենավան և Արմաշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7497 մ է:

ՇԱՂԱՓ – ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ե»

Վեդի գետի ափին գտնվող Շաղափ, Արարատ և Ուրցաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 82 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, բարձունքների գագաթներով, թիվ 2-9 սահմանակետերով անցնելով 629 մ, հասնում է 1307 մ միջ ունեցող բարձունքի գագաթի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 107 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 12-16 սահմանակետերով անցնում 525 մ, հասնում է դաշտային ճանապարհի և ձորի հատման կետում գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորի թիվ 18-36 սահմանակետերով անցնում 1611 մ, հասնում ձորի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 37 սահմանակետին: Թիվ 37

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 38-43 սահմանակետերով անցնելով 1120 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Շաղափ, Արարատ և Սուրենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ» - «Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4074 մ է:

ՇԱՂԱՓ - ՈՒՐՑԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Է»-«Ա»

Շաղափ, Ուրցածոր և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 263 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, հատում ձորակը, անցնում 388 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 788 մ, հասնում դաշտային ճանապարհների հատման կետից 200 մ դեպի հարավ-արևելք գտնվող թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1120 մ, հասնում անտառի եզրի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 967 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, շրջանցում լճակները, անցնում 363 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհը և, անցնելով 650 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, լանջով անցնում 349 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հետո հյուսիս-արևելք, լանջով՝ թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1032 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակը, անասնագոմերի մոտով անցնում է 338 մ, հասնում «Գելդճգին» քանդված գյուղատեղի մոտ գտնվող թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13 սահմանակետով անցնում 1007 մ, հասնում բացատի եզրի թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջով անցնում 1164 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 117 մ, հասնում ձորակի եզրի թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ձորակի թիվ 17 սահմանակետով անցնում 497 մ, հասնում ձորակի և Քյուսուզ գետի հատման կետում

գտնվող թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք և արևմուտք, Քյուսուզ գետով, թիվ 19 սահմանակետով անցնում 806 մ, հասնում գետի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը նույն գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետի թիվ 21-23 սահմանակետերով անցնում 1177 մ, հասնում փլատակների մոտ գտնվող դաշտային ճանապարհի և գետի հատման թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի ոլորանների թիվ 25-29 սահմանակետերով անցնելով 1689 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 31 սահմանակետով անցնում 1458 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Ոսկետափ-Քոլանլու ճանապարհը, Վեդի գետը, թիվ 33-34 սահմանակետերով անցնում է 2240 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին, այնուհետև շարունակվելով դեպի հարավ-արևմուտք, անցնում է 1278 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 1073 մ, հասնում 2349 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 37 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 951 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 983 մ, հասնում 2022 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, հետո կրկին հյուսիս-արևմուտք, ջրբաժանի թիվ 40-41 սահմանակետերով անցնում 2697 մ, հասնում թիվ 42 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորը, անցնում է 601 մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 44-45 սահմանակետերով անցնում է 1772 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 46 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհը, թիվ 47 սահմանակետով անցնում 832 մ, հասնում թիվ 48 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Շաղափ-Ուրցածոր միջհամայնքային ճանապարհը և, թիվ 49 սահմանակետով անցնելով 568 մ, հասնում է Սելավ գետի եզրի թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և, գետակի ոլորանների թիվ 51-56 սահմանակետերով անցնելով 914 մ, հասնում է թիվ 57 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային

ճանապարհը և, թիվ 58 սահմանակետով անցնելով 1213 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 59 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 686 մ, հասնում 1432 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 463 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 61 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 62-71 սահմանակետերով անցնում 1676 մ, հասնում ճանապարհի շրջադարձի վրա գտնվող թիվ 72 սահմանակետին: Թիվ 72 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 73-81 սահմանակետերով անցնում 1437 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 82 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 374 մ, հասնում Վեդի գետի ափին գտնվող Շաղափ, Ուրցաձոր և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 33928 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարույր Սևակ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լանջանիստ և «Բ»-«Գ» հատվածով՝ Լանջառ գյուղական համայնքներին, հյուսիս-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ուրցալանջ գյուղական համայնքին, արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Զանգակատուն գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավ-արևմուտքից և արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Երասխ գյուղական համայնքին:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - ԼԱՆՋԱՆԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Պարույր Սևակ, Լանջանիստ և Երասխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, հատելով ձորակներ, դաշտային ճանապարհ, ժայռեր և Բիրալի գետը, ճանապարհի թիվ 1-19 սահմանակետերով անցնում է 3621 մ, հասնում ճանապարհների խաչմերուկում գտնվող Պարույր Սևակ, Լանջանիստ և Լանջառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3621 մ է:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - ԼԱՆՋԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Պարույր Սևակ և Լանջառ գյուղական համայնքների սահմանի հետ:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - ՈՒՐՑԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Պարույր Սևակ և Ուրցալանջ գյուղական համայնքների սահմանի հետ:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Գետի ափին գտնվող Պարույր Սևակ, Ուրցալանջ և Ջանգակատուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 1-4 սահմանակետերով անցնելով 773 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 322 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, անցնում 697 մ, հասնում 1620 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը ժայռի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8-14 սահմանակետերով անցնում 2060 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, ժայռի եզրով, թիվ 16 սահմանակետով անցնում 679 մ, հասնում 1894 մ նիշով բարձունքի վրա գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 18-20 սահմանակետերով անցնում 1666 մ, հասնում 2006 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող Պարույր Սևակ, Ջանգակատուն գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6197 մ է:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

«Ե» - «Զ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - ԵՐԱՍԽ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ա»

Պարույր Սևակ, Երասխ և Լանջանիստ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով անցնում 1311 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 1820 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքի վրա գտնվող թիվ 3 սահմանակետով անցնելով 1763 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, լանջով, թիվ 5-6 սահմանակետերով անցնում 1040 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 8-12 սահմանակետերով անցնում 1934 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 903 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, թիվ 18-19 սահմանակետերով անցնում 1213 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 21-26 սահմանակետերով անցնում 3007 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, Երասխ-Պարույր Սևակ ճանապարհով, թիվ 28 սահմանակետով անցնում 2515 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 980 մ, հասնում Պարույր Սևակ, Երասխ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16488 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ջրաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Երևան քաղաքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Բարձրաշեն և «Գ»-«Դ» հատվածով՝ Արևշատ գյուղական համայնքներին, արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Դիտակ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Սրգավետ գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Ջրահովիտ և «Է»-«Ա» հատվածով՝ Նոր Կյուրին գյուղական համայնքներին:

ՋՐԱՇԵՆ - ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արարատի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ՋՐԱՇԵՆ - ԲԱՐԶՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Ջրաշեն, Բարձրաշեն գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 888 մ, հասնում Ջրաշեն, Արևշատ և Բարձրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 888 մ է:

ՋՐԱՇԵՆ -ԱՐԵՎՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Արտաշատի ջրանցքի հին հունի հատման կետում գտնվող Ջրաշեն, Արևշատ և Դիտակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, Արտաշատի ջրանցքի հին հունով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 290 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին,

այնուհետև թեքվում դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 197 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի հյուսիս-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 234 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 140 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում դեպի հյուսիս, բնական ձորակով, թիվ 13-14 սահմանակետերով անցնում 482 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 457 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 1373 մ, հասնում Ջրաշեն, Արևշատ և Բարձրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3173 մ է:

ՋՐԱՇԵՆ - ԴԻՏԱԿ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Արտաշատի ջրանցքի հին հունի հատման կետում գտնվող Ջրաշեն, Արևշատ և Դիտակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 100 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևմուտք և ջրանցքի հին հունի արևմտյան ափով, թիվ 3-10 սահմանակետերով անցնում 630 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, որտեղ հատում է Արտաշատի ջրանցքը, թեքվում դեպի արևմուտք և ջրանցքի հյուսիսային ափով, թիվ 12-13 սահմանակետերով անցնում 246 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 15 սահմանակետով անցնում 130 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 17 սահմանակետով անցնում 116 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 19 սահմանակետով անցնում 118 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 21 սահմանակետով անցնում 68 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 229 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 219 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևմուտք և ոռոգման առվի հունով, թիվ 29-30 սահմանակետերով անցնում 416 մ, հասնում թիվ 31 սահմանակետին, որտեղից

թեքվում է դեպի արևմուտք, թիվ 31 սահմանակետով անցնում 457 մ, հասնում թիվ 33 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 189 մ, հասնում թիվ 34 սահմանակետին, որտեղ հատում է պոմպակայանի ցանկապատը, թեքվում դեպի արևմուտք, ցանկապատով անցնում 158 մ, հասնում թիվ 35 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 36 սահմանակետով 199 մ, հասնում է Ջրաշեն, Դիտակ և Մրգավետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3275 մ է:

ՋՐԱՇԵՆ - ՄՐԳԱՎԵՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Ջրաշեն, Մրգավետ և Ջրահովիտ համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 1-2 սահմանակետով անցնում 307 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 321 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղ հատում է Մրգավետ-Ջրաշեն ավտոճանապարհը, թեքվում դեպի հյուսիս-արևելք, անցնում 58 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա հատում է պոմպակայանի խողովակը, թեքվում դեպի հարավ-արևելք, անցնում 76 մ, հասնում է Ջրաշեն, Դիտակ և Մրգավետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 762 մ է:

ՋՐԱՇԵՆ - ՋՐԱՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»

Ջրաշեն, Ջրահովիտ և Նոր Կյուրին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Արտաշատի ջրանցքի և դաշտային ճանապարհների հատման կետի կամրջի մոտ, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 2153 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, որտեղ հատում է ոռոգման առուները, թեքվում է դեպի հարավ-արևելք, ոռոգման առվով, թիվ 19-26 սահմանակետերով անցնում 856 մ, հասնում Ջրաշեն, Մրգավետ և Ջրահովիտ համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3009 մ է:

ՋՐԱՇԵՆ- ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»

Ջրաշեն, Նոր Կյուրին գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Արտաշատի շրջանցքի ծնկածև շրջադարձի մոտ՝ կամրջի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Արտաշատի ջրանցքով, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 600 մ, հասնում Արտաշատի ջրանցքի և դաշտային ճանապարհների հատման կետի կամրջի մոտ գտնվող Ջրաշեն, Ջրահովիտ և Նոր Կյուրին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 600 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սուրենավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շաղափ գյուղական համայնքին, հարավից և հարավ-արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արմաշ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Գ»-«Ա» հատվածով՝ Արարատ գյուղական համայնքին:

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ – ՇԱՂԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Սուրենավան, Շաղափ և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 1-15 սահմանակետերով անցնում 2267 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անցնում 150 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում 934 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 466 մ, հասնում դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով թեքվում հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 21-47 սահմանակետերով անցնում 3680 մ, հասնում Սուրենավան, Շաղափ և Արմաշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7497 մ է:

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ - ԱՐՄԱՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Սուրենավան, Արմաշ և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի

եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 1-16 սահմանակետերով անցնում 2546 մ, հասնում դաշտային ճանապարհի, խողովակաշարի և ոռոգման առվի հատման կետում գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը մայր ջրատարով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Սուրենավան-Արմաշ խճուղային ճանապարհը և Երևան-Ջուլֆա երկաթգիծը, թիվ 18-21 սահմանակետերով անցնում է 3758 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 23 սահմանակետով անցնում 891 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 545 մ, հասնում ջրատար առվի եզրի թիվ 25 սահմանակետին, այստեղից թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, ջրատար առվով անցնում 465 մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձկնաբուծական երկու լճերի միջև ընկած ճանապարհով անցնում 2563 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 637 մ, հասնում Սուրենավան, Արմաշ և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11406 մ է:

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ - ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»

Սուրենավան, Արարատ և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորապտույտների թիվ 1-40 սահմանակետերով անցնում 4945 մ, հասնում թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում նախ ոռոգման առվով, ապա եռանկյունաչափական թիվ 42 սահմանակետով 1274 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 43 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 44-46 սահմանակետերով անցնում 906 մ, հասնում 857 մ նիշով բարձունքի գագաթի թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 401 մ, հասնում թիվ 48 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 49-51 սահմանակետերով անցնում 1282 մ, հասնում թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով անցնում 455 մ, հասնում թիվ 53 սահմանակետին,

այնուհետև թեքվում է դեպի հարավ, հատում Երևան-Երասխա խճուղային ճանապարհը, անցնում 187 մ, հասնում թիվ 54 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում Երևան-Երասխա երկաթգիծը, թիվ 55-56 սահմանակետերով անցնում 524 մ, հասնում Կախանովի ջրանցքի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, նշված ջրանցքով անցնում 3242 մ, հասնում 803 մ նիշ ունեցող հողաթմբի վրա գտնվող թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 59 սահմանակետով անցնում 810 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 60 սահմանակետին, ապա նույն ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հետո հարավ-արևմուտք, թիվ 61-63 սահմանակետերով անցնում 2030 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին՝ ոլորանի մոտ գտնվող թիվ 64 սահմանակետին, այնուհետև նույն ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա կտրուկ թեքվում դեպի արևմուտք, ճանապարհի թիվ 65 սահմանակետով անցնում 1321 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 66 սահմանակետին: Թիվ 66 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լճակի եզրով, թիվ 67 սահմանակետով անցնելով 1952 մ, հասնում է Սուրենավան, Արարատ և Արմաշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19330 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վերին Դվին գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Քաղցրաշեն և «Գ»-«Դ» հատվածով՝ Նորաշեն գյուղական համայնքներին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Դվին համայնքին:

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ - ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արարատի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ – ՔԱՂՑՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Սարի գագաթին գտնվող Քաղցրաշեն, Վերին Դվին գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1214 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, այնուհետև հարավ, գետով անցնում 2571 մ, հասնում գետի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորաններով անցնում 3982 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Քաղցրաշեն, Վերին Դվին և Նորաշեն համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի երկարությունը 7767 մ է:

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ – ՆՈՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Վերին Դվին, Նորաշեն և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 1-8 սահմանակետերով անցնում 925 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհի թիվ 10 սահմանակետով անցնում 196 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 12-36 սահմանակետերով անցնում 3616 մ, հասնում է դաշտային ճանապարհի և ձորի հատման կետում գտնվող թիվ 37 սահմանակետին, որտեղ հատում է ձորը, թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 38-50 սահմանակետերով անցնում 1964 մ, հասնում դաշտային ճանապարհի և գետի հատման կետում գտնվող թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, գետով, թիվ 52-149 սահմանակետերով անցնում 808 մ, հասնում թիվ 150 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, գետի ոլորանների թիվ 151-157 սահմանակետերով անցնում 6295 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 158 սահմանակետին: Թիվ 158 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, դաշտային ճանապարհի թիվ 159-175 սահմանակետերով անցնում 2047 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 176 սահմանակետին: Թիվ 176 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Խոսրովի արգելոցի եզրագծի թիվ 177 սահմանակետով անցնում 750 մ, հասնում է թիվ 178 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 179-180 սահմանակետերով անցնում 593 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 181 սահմանակետին: Թիվ 181 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 182-188 սահմանակետերով անցնում 1799 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 189 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհի թիվ 190-192 սահմանակետերով անցնում 531 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 193 սահմանակետին: Թիվ 193 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, նույն դաշտային ճանապարհի ոլորանների թիվ 194-216

սահմանակետերով անցնում 2771 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 217 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 218-222 սահմանակետերով անցնում 1058 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 223 սահմանակետին: Թիվ 223 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորի թիվ 224 սահմանակետով անցնում 646 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 225 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների գագաթներով, թիվ 226-227 սահմանակետերով անցնում 1672 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 228 սահմանակետին, որտեղից շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 229 սահմանակետով անցնում 470 մ, հասնում ձորում գտնվող թիվ 230 սահմանակետին: Թիվ 230 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 3589 մ, հասնում ձորի թիվ 231 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 432 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 232 սահմանակետին, այդտեղից շարունակվելով նույն ուղղությամբ, հատում է գետը, անցնում 657 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 233 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 234 սահմանակետով անցնում 695 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 235 սահմանակետին: Թիվ 235 սահմանակետից սահմանագիծը ձորակով անցնում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 359 մ, հասնում թիվ 236 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 178 մ, հասնում թիվ 237 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 238-239 սահմանակետերով անցնում 560 մ, հասնում թիվ 240 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 241 սահմանակետով անցնում 324 մ, հասնում թիվ 242 սահմանակետին: Թիվ 242 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 243-247 սահմանակետերով անցնում 1226 մ, հասնում ձորակի և Դվինի ջրանցքի հատման կետում գտնվող թիվ 248 սահմանակետին: Թիվ 248 սահմանակետից սահմանագիծը Դվինի ջրանցքի հունով անցնում է դեպի հարավ-արևելք 68 մ, հասնում ձորակի թիվ 249 սահմանակետին, այստեղից թեքվում դեպի հարավ-արևմուտք, ձորակի թիվ 250-251 սահմանակետերով անցնում 666 մ, հասնում թիվ 252 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 30 մ, հասնում թիվ 253 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 271 մ, հասնում կիսախողովակի թիվ 254 սահմանակետին: Թիվ 254 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, կիսախողովակով, թիվ 255 սահմանակետով անցնում 447 մ, հասնում ջրանցքի և կիսախողովակի հատման կետում գտնվող թիվ 256 սահմանակետին, որտեղից

ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 257-265 սահմանակետերով անցնում 1200 մ, հասնում ջրանցքի և ոռոգման առվի հատման կետում գտնվող թիվ 266 սահմանակետին: Թիվ 266 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 267 սահմանակետով անցնում 334 մ, հասնում թիվ 268 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 269-270 սահմանակետերով անցնում 736 մ, հասնում թիվ 271 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ, հատելով ձորակը, ապա Նորաշեն-Քաղցրաշեն ավտոճանապարհը, անցնելով թիվ 272-276 սահմանակետերով 1925 մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 277 սահմանակետին, որտեղից ոռոգման առվով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 28 մ, հասնում Վերին Դվին, Նորաշեն և Դվին համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» -«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 43867 մ է:

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ –ԴՎԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ա»

Վերին Դվին, Դվին գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 906 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 2-9 սահմանակետերով անցնում 5201 մ, հասնում է Գիլանչար գետի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը գետով, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 16509 մ, հասնում է գետի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Խոսրովի արգելանոցի եզրագծի դաշտային ճանապարհի թիվ 14-36 սահմանակետերով անցնում է 3825 մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բլուրների գագաթներով, թիվ 38-40 սահմանակետերով անցնում 4604 մ, հասնում է թիվ 41 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս- արևմուտք, անցնում է 700 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, առվի ոլորապտույտների թիվ 43-126 սահմանակետերով անցնում 10379 մ, հասնում է երկու առուների հատման կետում գտնվող թիվ 127 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, առվով, թիվ 128-132 սահմանակետերով

անցնում 739 մ, հասնում է երկու առուների հատման կետում գտնվող թիվ 133 սահմանակետին: Թիվ 133 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով, թիվ 134-137 սահմանակետերով անցնում 933 մ, հասնում է առվի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 138 սահմանակետին: Թիվ 138 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 139-154 սահմանակետերով անցնում 2807 մ, հասնում է թիվ 155 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, տեղանքի խորդուբորդություններով, թիվ 156-179 սահմանակետերով անցնում 1561 մ, հասնում է ձորի թիվ 180 սահմանակետին: Թիվ 180 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս, ձորով, թիվ 181-191 սահմանակետերով անցնում է 1638 մ, հասնում է ձորի թիվ 192 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ձորով, թիվ 193-220 սահմանակետերով անցնում է 3155 մ, հասնում է ձորի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 221 սահմանակետին: Թիվ 221 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 222-232 սահմանակետերով անցնում 1670 մ, հասնում է ճանապարհի արևելյան եզրի թիվ 233 սահմանակետին: Թիվ 233 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բետոնե կիսախողովակով, թիվ 234-235 սահմանակետերով անցնում 253 մ, հասնում է թիվ 236 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 237-238 սահմանակետերով անցնում 516 մ, հասնում է թիվ 239 սահմանակետին: Թիվ 239 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվի հունով, թիվ 240 սահմանակետով անցնում 241 մ, հասնում է թիվ 241 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 242-243 սահմանակետերով անցնում 289 մ, հասնում է թիվ 244 սահմանակետին: Թիվ 244 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 245 սահմանակետով անցնում 315 մ, հասնում է թիվ 246 սահմանակետին, ապա շարունակվում նույն ուղղությամբ, հատում է Դվին-Վերին Դվին ավտոճանապարհը, թիվ 247-254 սահմանակետերով անցնում 1498 մ, հասնում է Վերին Դվին, Նորաշեն և Դվին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի երկարությունը 57740 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուրցածոր գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ջանգակատուն գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Լուսաշող գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Շաղափ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Արարատ, «Զ»-«Է» հատվածով՝ Գոռավան գյուղական համայնքների, արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Դաշտաքար գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Ը»-«Ա» հատվածով՝ Քաղցրաշեն գյուղական համայնքին:

ՈՒՐՑԱԶՈՐ – ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արարատի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ՈՒՐՑԱԶՈՐ – ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Ուրցածոր, Ջանգակատուն գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակը, թիվ 1-3 սահմանակետերով անցնում է 1999 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 5 սահմանակետով անցնելով 458 մ, հասնում է Ուրցածոր, Ջանգակատուն և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2457 մ է:

ՈՒՐՑԱԶՈՐ – ԼՈՒՍԱԶՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Ուրցածոր, Ջանգակատուն և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը նաև եռանկյունաչափական կետ է, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում է 1729 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 3 սահմանակետով անցնում է 866 մ, հասնում Ուրցածոր, Լուսաշող և Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2594 մ է:

ՈՒՐՑԱԶՈՐ - ՇԱՂԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Ուրցածոր, Շաղափ և Լուսաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 263 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, հատում ձորակը, անցնում 388 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 788 մ, հասնում դաշտային ճանապարհների հատման կետից 200 մ դեպի հարավ-արևելք գտնվող թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1120 մ, հասնում անտառի եզրի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 967 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, շրջանցում լճակները, անցնում 363 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհը և, անցնելով 650 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, լանջով անցնում 349 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հետո հյուսիս-արևելք, լանջով, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1032 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակը, անասնագոմերի մոտով անցնում է 338 մ, հասնում «Գելլճգին» քանդված գյուղատեղի մոտ գտնվող թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13 սահմանակետով անցնում 1007 մ, հասնում

բացատի եզրի թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջով անցնում 1164 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 117 մ, հասնում ձորակի եզրի թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ձորակի թիվ 17 սահմանակետով անցնում 497 մ, հասնում ձորակի և Քյուսուզ գետի հատման կետում գտնվող թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք և արևմուտք, Քյուսուզ գետով, թիվ 19 սահմանակետով անցնում 806 մ, հասնում գետի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը նույն գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետի թիվ 21-23 սահմանակետերով անցնում 1177 մ, հասնում փլատակների մոտ գտնվող դաշտային ճանապարհի և գետի հատման կետում գտնվող թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի ոլորանների թիվ 25-29 սահմանակետերով անցնելով 1689 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 31 սահմանակետով անցնում 1458 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Ոսկետափ-Քոլանլու ճանապարհը, Վեդի գետը, թիվ 33-34 սահմանակետերով անցնում է 2240 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին, այնուհետև շարունակվելով դեպի հարավ-արևմուտք, անցնում է 1278 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 1073 մ, հասնում 2349 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 37 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 951 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 983 մ, հասնում 2022 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, հետո կրկին հյուսիս-արևմուտք, ջրբաժանի թիվ 40-41 սահմանակետերով անցնում 2697 մ, հասնում թիվ 42 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորը, անցնում է 601 մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 44-45 սահմանակետերով անցնում է 1772 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 46 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհը, թիվ 47 սահմանակետով անցնում 832 մ, հասնում թիվ 48 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-

արևմուտք, հատում Շաղափ-Ուրցածոր միջհամայնքային ճանապարհը և, թիվ 49 սահմանակետով անցնելով 568 մ, հասնում է Սելավ գետի եզրի թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և, գետակի ոլորանների թիվ 51-56 սահմանակետերով անցնելով 914 մ, հասնում է թիվ 57 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը և, թիվ 58 սահմանակետով անցնելով 1213 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 59 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 686 մ, հասնում 1432 մ նիշով բարձունքի գագաթին գտնվող թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 463 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 61 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 62-71 սահմանակետերով անցնում 1676 մ, հասնում ճանապարհի շրջադարձի վրա գտնվող թիվ 72 սահմանակետին: Թիվ 72 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 73-81 սահմանակետերով անցնում 1437 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 82 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 374 մ, հասնում Վեդի գետի ափին գտնվող Ուրցածոր, Շաղափ և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 33928 մ է:

ՈՒՐՑԱԶՈՐ - ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Ե»-«Զ»

Ուրցածոր, Արարատ և Գոռավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 568 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 343 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 511 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 376 մ, հասնում ձորակի սկզբնամասի մոտ գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորի թիվ 5-17 սահմանակետերով անցնում 1822 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 327 մ, հասնում Ուրցածոր, Արարատ և

Շաղափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3947 մ է:

ՈՒՐՑԱԶՈՐ - ԳՈՌԱՎԱՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ե»

Ուրցաձոր, Գոռավան և Դաշտաքար համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Վեդի գետի ափին, սահմանագիծը Վեդի գետով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1392 մ, հասնում Վեդի գետի ձախ ափին գտնվող թիվ 8 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 354 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, այդտեղից առվով իջնում է դեպի արևմուտք, անցնում 112 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 11 սահմանակետով անցնում 1023 մ, հասնում է Ուրցաձոր, Գոռավան և Արարատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2681 մ է:

ՈՒՐՑԱԶՈՐ - ԴԱՇՏԱՔԱՐ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ը»

Ուրցաձոր, Դաշտաքար և Քաղցրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1011 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում է 346 մ, հասնում դաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 15448 մ, հասնում գետի և ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ջրանցքի ոլորանների թիվ 6-21 սահմանակետերով անցնում 1395 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, հատում Վեդի-Ուրցաձոր միջգյուղյա ճանապարհը, հետո հատում Վեդի-Ուրցաձոր խճուղային ճանապարհը, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 639 մ, հասնում Վեդի գետի աջ ափին գտնվող Ուրցաձոր,

Դաշտաքար և Գոռավան համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18838 մ է:

ՈՒՑԱԶՈՐ – ՔԱՂՏՐԱՇԵՆ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Գետի եզրին գտնվող Քաղցրաշեն, Ուրցաձոր համայնքների և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 9337 մ, հասնում է գետի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, գետը և, Խոսրովի արգելոցի սահմանագծով անցնելով 1049 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ջրհավաք առուները և անցնելով Խոսրովի արգելոցի սահմանագծի թիվ 3 սահմանակետով 2460 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ձորով անցնում 1279 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, Խոսրովի արգելոցի սահմանագծով անցնում 471 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնում 460 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 514 մ, հասնում է գետի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների վրա գտնվող թիվ 10-23 սահմանակետերով անցնում 5853 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, գետով անցնում 2917 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների վրա գտնվող թիվ 26-29 սահմանակետերով անցնում 1548 մ, հասնում Քաղցրաշեն, Ուրցաձոր և Դաշտաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 25888 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՏՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղցրաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Ուրցաձոր, «Գ»-«Դ» հատվածով՝ Դաշտաքար գյուղական համայնքներին, հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Այգեզարդ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Նորաշեն, «Զ»-«Է» հատվածով՝ Նարեկ, «Է»-«Ը» հատվածով՝ Նորաշեն և «Ը»-«Ա» հատվածով Վերին Դվին գյուղական համայնքներին:

ՔԱՂՏՐԱՇԵՆ –ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արարատի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ՔԱՂՏՐԱՇԵՆ –ՈՒՐՑԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Բ»-«Գ»

Գետի եզրին գտնվող Քաղցրաշեն, Ուրցաձոր համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 9337 մ, հասնում է գետի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, գետը և, Խոսրովի արգելոցի սահմանագծով անցնելով 1049 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ջրհավաք առուները և անցնելով Խոսրովի արգելոցի սահմանագծի թիվ 3 սահմանակետով 2460 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ձորով անցնում 1279 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, Խոսրովի արգելոցի սահմանագծով անցնում է 471 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնում 460 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 514 մ,

հասնում է գետի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների վրա գտնվող թիվ 10-23 սահմանակետերով անցնում 5853 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, գետով անցնում 2917 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների վրա գտնվող թիվ 26-29 սահմանակետերով անցնում 1548 մ, հասնում Քաղցրաշեն, Ուրցաձոր և Դաշտաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 25888 մ է:

ՔԱՂՑՐԱՇԵՆ –ԴԱՇՏԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Գ»-«Դ»

Ձորի եզրին գտնվող Քաղցրաշեն, Դաշտաքար և Ուրցաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1317 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 493 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1708 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 1347 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 403 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհները, թիվ 9-12 սահմանակետերով անցնելով 3854 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում թիվ 14-15 սահմանակետերով 702 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում թիվ 17 սահմանակետով 930 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 19-22 սահմանակետերով անցնում 1657 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Քաղցրաշեն, Դաշտաքար և Այգեզարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12411 մ է:

ՔԱՂՑՐԱՇԵՆ –ԱՅԳԵԶԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Դ»-«Ե»

Քաղցրաշեն, Այգեզարդ և Դաշտաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 1-13 սահմանակետերով անցնում է 3926 մ և հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-16 սահմանակետերով անցնում 4074 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 1740 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը ջրանցքով, թիվ 19-30 սահմանակետերով անցնում է 3994 մ և հասնում է թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, հատում Ոստան-Քաղցրաշեն ավտոճանապարհը, բետոնե կիսախողովակով, թիվ 32-49 սահմանակետերով անցնում է 2988 մ, հասնում է բետոնե կիսախողովակի մոտ գտնվող Քաղցրաշեն, Այգեզարդ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի երկարությունը 16723 մ է:

ՔԱՂՑՐԱՇԵՆ –ՆՈՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Ե»-«Զ»

Ջրանցքի հյուսիսային ափին գտնվող Քաղցրաշեն, Նարեկ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 137 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 143 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի թիվ 3-7 սահմանակետերով անցնում 1050 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, անցնում է 157 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, բետոնե կիսախողովակով, թիվ 10-17 սահմանակետերով հատելով Նորաշեն-Քաղցրաշեն ավտոճանապարհը, անցնում է 1964 մ, հասնում է Քաղցրաշեն, Այգեզարդ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ձ» սահմանագծի երկարությունը 3451 մ է:

ՔԱՂՑՐԱՇԵՆ –ՆԱՐԵԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Ձ»-«Ե»

Ղաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող Քաղցրաշեն, Նարեկ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով անցնում 5735 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 734 մ, հասնում գետի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, արևմուտք, նորից հարավ-արևմուտք, գետով անցնում 7244 մ, հասնում գետի և Ղաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, Ղաշտային ճանապարհի թիվ 4-9 սահմանակետերով անցնում 1001 մ, հասնում է Ղաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Ղաշտային ճանապարհի թիվ 11-27 սահմանակետերով անցնում 1435 մ, հասնում Ղաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, Խոսրովի արգելանոցի սահմանագծի թիվ 29-30 սահմանակետերով անցնում 813 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 1741 մ, հասնում ձորի և Ղաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, Ղաշտային ճանապարհի ղլորապտույտների թիվ 33-176 սահմանակետերով անցնում 12007 մ, հասնում Ղաշտային ճանապարհի և ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 177 սահմանակետին: Թիվ 177 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, այնուհետև հյուսիս-արևմուտք, ջրանցքով, թիվ 178-214 սահմանակետերով անցնում 6883 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 215 սահմանակետին: Թիվ 215 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 216-220 սահմանակետերով անցնում 1059 մ, հասնում է թիվ 221 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 85 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 222 սահմանակետին: Թիվ 222 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս, թիվ

223 սահմանակետով անցնում 64 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 224 սահմանակետին: Թիվ 224 սահմանակետից սահմանագիծը ոռոգման առվով թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 225-226 սահմանակետերով անցնում 533 մ, հասնում թիվ 227 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, ձորակով անցնում 112 մ, հասնում թիվ 228 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևմուտք, անցնում 24 մ, հասնում Քաղցրաշեն-Նարեկ ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 229 սահմանակետին: Թիվ 229 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, թիվ 230-231 սահմանակետերով անցնում է 302 մ, հասնում է Դվինի ջրանցքի և ձորակի հատման կետում գտնվող թիվ 232 սահմանակետին: Թիվ 232 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, Դվին ջրանցքի ոլորապտույտների թիվ 233-247 սահմանակետերով անցնում է 1643 մ, հասնում է ջրանցքի հյուսիսային ափին գտնվող Քաղցրաշեն, Նարեկ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի երկարությունը 41417 մ է:

ՔԱՂՑՐԱՇԵՆ –ՆՈՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ `«Է»-«Ը»

Ղաշտային ճանապարհների հատման տեղում գտնվող Քաղցրաշեն, Նորաշեն և Վերին Դվին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 2130 մ, հասնում դաշտային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող Քաղցրաշեն, Նորաշեն և Նարեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի երկարությունը 2130 մ է:

ՔԱՂՑՐԱՇԵՆ –ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Ը»-«Ա»

Սարի գագաթին գտնվող Քաղցրաշեն, Վերին Դվին գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1214 մ հասնում գետի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ,

գետով անցնում 2571 մ, հասնում գետի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորաններով անցնում 3982 մ, հասնում դաշտային ճանապարհների հատման տեղում գտնվող Քաղցրաշեն, Վերին Դվին և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Ա» սահմանագծի երկարությունը 7767 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արմավիր քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից և հյուսիս-արևելքից «Ա» - «Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մայիսյան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Մրգաշատ և «Դ»-«Ե» հատվածով՝ Նորապատ գյուղական համայնքներին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Լուկաշին գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Զ» - «Ա» հատվածով՝ Նորավան գյուղական համայնքին:

ԱՐՄԱՎԻՐ – ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերի սահմանների հետ:

ԱՐՄԱՎԻՐ – ՄԱՅԻՍՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Արմավիր քաղաքային, Մայիսյան գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 588 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 767 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1046 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1000 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում 557 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում 213 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այնուհետև

թեքվում է դեպի հարավ, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 942 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, թիվ 17-22 սահմանակետերով անցնում 867 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 362 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 255 մ, հասնում է թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հյուսիս-արևելք, թիվ 28 սահմանակետով անցնում 563 մ, հասնում է թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 30-33 սահմանակետերով անցնում 497 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 35-36 սահմանակետերով անցնում 435 մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 38-40 սահմանակետերով անցնում 458 մ, հատելով Սևջուր ջրանցքը, հասնում է թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 42-54 սահմանակետերով անցնում 1651 մ, հասնում է թիվ 55 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ, ապա արևմուտք, թիվ 56-57 սահմանակետերով անցնում 556 մ, հասնում է թիվ 58 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 289 մ, հասնում է Արմավիր քաղաքային, Մայիսյան և Մրգաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11046 մ է:

ԱՐՄԱՎԻՐ - ՄՐԳԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Արմավիր քաղաքային, Նորապատ և Մրգաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը երկաթգծով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 1240 մ, հասնում Արմավիր քաղաքային, Մայիսյան և Մրգաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1240 մ է:

ԱՐՄԱՎԻՐ - ՆՈՐԱՊԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Արմավիր քաղաքային, Նորապատ և Լուկաշին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Նորապատ-Արմավիր ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1032 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը փողոցով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1227 մ, հասնում երկաթգծի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից սահմանագիծը երկաթգծով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10-20 սահմանակետերով անցնում 1470 մ, հասնում Արմավիր քաղաքային, Նորապատ և Մրգաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3729 մ է:

ԱՐՄԱՎԻՐ - ԼՈՒԿԱՇԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Արմավիր քաղաքային, Նորավան և Լուկաշին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1249 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը Մաստարա սելավատարով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10-12 սահմանակետերով անցնում 1143 մ, հասնում կամրջի մոտ գտնվող թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 83 մ, հատելով կամուրջը, հասնում է Արմավիր քաղաքային, Լուկաշին և Նորապատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2475 մ է:

ԱՐՄԱՎԻՐ - ՆՈՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ա»

Արմավիր քաղաքային, Նորավան գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-11

սահմանակետերով անցնում 1016 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ճանապարհով, թիվ 13-15 սահմանակետերով անցնում 1253 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհով, թիվ 17-31 սահմանակետերով անցնում 2260 մ, հասնում առվի եզրից գտնվող թիվ 32 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 33 սահմանակետով անցնում 203 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա արևմուտք, բնակավայրի եզրագծով, թիվ 35 սահմանակետով անցնում 84 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 37-38 սահմանակետերով անցնում 212 մ, հասնում թիվ 39 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք, բնակավայրի եզրագծով, թիվ 40-48 սահմանակետերով անցնում 1796 մ, հասնում է թիվ 49 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 137 մ, հասնում է թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, բնակավայրի եզրագծով, թիվ 51- 52 սահմանակետերով անցնում 880 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է հյուսիս-արևմուտք, կրկին բնակավայրի եզրագծով, թիվ 54-55 սահմանակետերով անցնում 471 մ, հասնում է թիվ 56 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 57-58 սահմանակետերով անցնում 790 մ, հասնում է Արմավիր քաղաքային, Նորավան և Լուկաշին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9102 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՍՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծամոր քաղաքային համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ակնալիճ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Տարոնիկ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ջարթոնք գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Արևիկ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Մրգաշատ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Մայիսյան գյուղական համայնքին:

ՄԵԾԱՍՈՐ - ԱԿՆԱԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Մեծամոր քաղաքային, Ակնալիճ և Մայիսյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Սևջուր ջրանցքով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 395 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է հարավ, թիվ 4 սահմանակետով անցնում 576 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, նույն դաշտային ճանապարհով թեքվում է դեպի արևելք, թիվ 6-10 սահմանակետերով անցնում 1423 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 611 մ, հասնում է Երևան-Արմավիր միջպետական նշանակություն ունեցող ճանապարհի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում 873 մ, հասնում է Ակնալիճ-Ջարթոնք միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող Մեծամոր քաղաքային, Ակնալիճ և Տարոնիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3878 մ է:

ՄԵԾԱՄՈՐ – ՏԱՐՈՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Մեծամոր քաղաքային, Ակնալիճ և Տարոնիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Ակնալիճ-Ջարթոնք միջհամայնքային ճանապարհով, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 834 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը Սևջուր ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 85 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 816 մ, հասնում է Մեծամոր քաղաքային, Տարոնիկ և Ջարթոնք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1735 մ է:

ՄԵԾԱՄՈՐ - ՋԱՐԹՈՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Մեծամոր քաղաքային, Տարոնիկ և Ջարթոնք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1335 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 808 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը երկաթգծով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 739 մ, հասնում է Մեծամոր քաղաքային, Ջարթոնք և Արևիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2882 մ է:

ՄԵԾԱՄՈՐ - ԱՐԵՎԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Մեծամոր քաղաքային, Արևիկ և Մրգաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Երևան-Գյումրի երկաթգծի եզրին, սահմանագիծը երկաթգծով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1551 մ, հասնում է Մեծամոր քաղաքային, Արևիկ և Ջարթոնք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1551 մ է:

ՄԵԾԱՄՈՐ – ՄՐԳԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Արմավիր-Երևան միջպետական նշանակության ճանապարհի եզրին գտնվող Մեծամոր քաղաքային, Մրգաշատ և Մայիսյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 332 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 1718 մ, հասնում է Մեծամոր քաղաքային, Արևիկ և Մրգաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2050 մ է:

ՄԵԾԱՄՈՐ – ՄԱՅԻՍՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»

Մեծամոր քաղաքային, Ակնալիճ և Մայիսյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Սևջուր ջրանցքով թեքվում է դեպի արևմուտք, հասնում սելավատարին, այնուհետև սելավատարով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, անցնում 2282 մ, հասնում է Արմավիր-Երևան միջպետական նշանակության ճանապարհի եզրին գտնվող Մեծամոր քաղաքային, Մայիսյան և Մրգաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2282 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արևաշատ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Բարձունքի վրա գտնվող Հորբատեղ, Քարագլուխ գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 597 մ, հասնում բարձունքի վրա գտնվող Հորբատեղ, Քարագլուխ և Արտաբույնք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 597 մ է:

ՀՈՐԲԱՏԵՂ - ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերի վարչական սահմանների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հորս գյուղական համայնքի տարածքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սալլի գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Շատին գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Աղավնաձոր գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Ռինդ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Թառաթունք գյուղական համայնքին:

ՀՈՐՍ – ՍԱԼԼԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Հորս, Սալլի և Թառաթունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բլրի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 645 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 445 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 627 մ, հասնում բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին, հետո թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնում է 329 մ, հասնում ձորակի եզրին գտնվող Հորս, Սալլի և Շատին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2046 մ է:

ՀՈՐՍ – ՇԱՏԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Հորս, Շատին և Սալլի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 518 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է

դեպի հարավ, հասնում գետը, անցնում 645 մ, հասնում ջրբաժանի թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 3-6 սահմանակետերով անցնում 1837 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից նույն ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գագաթներով անցնում 703 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և, անցնելով 250 մ, հասնում է 2116 մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 621 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա վարելահողի եզրով կրկին թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնում է 302 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով, թիվ 12 սահմանակետով անցնում 354 մ, հասնում է անտառի եզրի թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 266 մ, հասնում Սելին գետի վտակի ափին գտնվող թիվ 14 սահմանակետին, նշված վտակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վտակի թիվ 15-21 սահմանակետերով անցնելով 1018 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 23-28 սահմանակետերով անցնում 1163 մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 260 մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 30 սահմանակետին, այստեղից էլ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 262 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, գագաթներով, թիվ 32-33 սահմանակետերով անցնում 670 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 34 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 233 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Յորս, Շատին և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9104 մ է:

ՅՈՐՍ – ԱՂԱՎՆԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Անտառի եզրին գտնվող Յորս, Աղավնաձոր և Ռինդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 235 մ, հասնում անտառի եզրի թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 310 մ, հասնում ժայռի եզրի թիվ 2

սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ժայռերի գագաթներով, թիվ 3-5 սահմանակետերով անցնելով 1390 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 328 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով և անտառի եզրով, թիվ 8-12 սահմանակետերով անցնելով 1412 մ, հասնում 2197 մ նիշով սարի գագաթին գտնվող Յորս, Աղավնաձոր և Շատին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3676 մ է:

ՅՈՐՍ – ՌԻՆԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Յորս, Ռինդ և Թառաթունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով հատելով ջրբաժանը, թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 2966 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որը գտնվում է 2772 մ նիշ ունեցող սարի գագաթին, այստեղից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ջրբաժանի թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1021 մ, հասնում բլրի գագաթին գտնվող 2567 մ նիշ ունեցող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 7 սահմանակետով անցնում 1272 մ, հասնում է անտառի եզրին գտնվող Յորս, Ռինդ և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5259 մ է:

ՅՈՐՍ – ԹԱՌԱԹՈՒՄԲ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Յորս, Թառաթունք և Ռինդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ձորակը և բարձունքը, լանջով՝ թիվ 1-5 սահմանակետերով անցնում է 1780 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այստեղից ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա արևելք, ձորի թիվ 7-13 սահմանակետերով անցնում 572 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 201 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 31 մ, հասնում թիվ 16

սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջով անցնում 425 մ, հասնում ձորակի եզրի թիվ 17 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 18-20 սահմանակետերով անցնելով 286 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է 381 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, լանջով անցնում 385 մ, հասնում բլրագագաթի թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 150 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 206 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 295 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 220 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 27 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 27-31 սահմանակետերով անցնելով 1096 մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 33-35 սահմանակետերով անցնում 1523 մ, հասնում թիվ 36 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում Թառաթունբ գետակը և թիվ 37 սահմանակետով անցնելով 358 մ, հասնում է 2160 մ նիշ ունեցող եռանկյունաչափական թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 39-42 սահմանակետերով անցնելով 1998 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 43 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում է ձորակը, ջրբաժանի թիվ 44 սահմանակետով անցնում 521 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Յորս, Թառաթունբ և Սալլի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10427 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇՎԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մալիշկա գյուղական համայնքի տարածքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կարմրաշեն, «Բ»-«Գ» հատվածով՝ Չերիեր և «Գ»-«Դ» հատվածով՝ Արին գյուղական համայնքներին, հարավ-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Վայք քաղաքային համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Ջեղեա գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Ագարակաձոր գյուղական համայնքին, արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Եղեգնաձոր քաղաքային, «Ը»-«Թ» հատվածով՝ Գլաձոր գյուղական և «Թ»-«Ժ» հատվածով՝ Վերնաշեն գյուղական համայնքներին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից «Ժ»-«Ա» հատվածով՝ Գողթանիկ գյուղական համայնքին:

ՄԱԼԻՇՎԱ – ԿԱՐՄՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Մալիշկա, Կարմրաշեն և Գողթանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջերով, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 2131 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորը և, անցնելով 561 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 5 սահմանակետով անցնում 1740 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ճանապարհի թիվ 7-10 սահմանակետերով անցնելով 2365 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 12-13 սահմանակետերով անցնելով 1258 մ, հասնում է 2527 մ նիշ ունեցող սարի գագաթի թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 468 մ, հասնում բլրի գագաթի թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանի

թիվ 16 սահմանակետով անցում 952 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը և Եղեգիս գետի վտակը, ջրբաժանի թիվ 18-23 սահմանակետերով անցնում է 2284 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, գագաթներով, թիվ 25-27 սահմանակետերով անցնելով 1523 մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 28 սահմանակետին, այստեղից դարձյալ թեքվում է դեպի հարավ-արևելք, գագաթներով, թիվ 29 սահմանակետով անցնում 594 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բարձունքների գագաթների թիվ 31-32 սահմանակետերով անցնելով 738 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 34-36 սահմանակետերով անցնում 1603 մ, հասնում 2586 մ նիշ ունեցող Դալիթափա եռանկյունաչափական կետին հանընկնող Մալիշկա, Կարմրաշեն և Ջերիեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16216 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ՋԵՐՋԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

2586 մ նիշ ունեցող Դալիթափա եռանկյունաչափական կետին հանընկնող Մալիշկա, Ջերիեր և Կարմրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 1 սահմանակետով անցնում 1082 մ, հասնում բարձունքի թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 340 մ, հասնում ջրբաժանի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը, թիվ 4 սահմանակետով անցնում է 952 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա հարավ, թիվ 6 սահմանակետով անցնում 671 մ, հասնում ձորակի եզրի թիվ 7 սահմանակետին, այստեղից հատում է ձորակը, թեքվում դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 8-11 սահմանակետերով անցնում 1876 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 13-15 սահմանակետերով անցնում 1599 մ, հասնում 2107 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 450 մ, հասնում 2102 մ նիշով սարի գագաթի թիվ 17 սահմանակետին, այնուհետև

թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 511 մ, հասնում ջրբաժանի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Արփա գետի վտակը, անցնում 781 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 384 մ, հասնում սարի գագաթին գտնվող Մալիշկա, Չերիեր և Արին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8644 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ԱՐԻՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

2008 մ ճիշ ունեցող սարի գագաթին գտնվող Մալիշկա, Արին և Չերիեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 582 մ, հատելով Չերիեր գետի վտակը, հասնում բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնելով 816 մ, հասնում բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 457 մ, հատելով ճանապարհը, հասնում է բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 457 մ, հատելով ճանապարհը հասնում է բլրի գագաթի թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հետո հարավ, թիվ 5 սահմանակետով, վարելահողի եզրով անցնելով 1046 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, վարելահողի եզրի թիվ 7-9 սահմանակետերով անցնում 1465 մ, հասնում ջրբաժանի թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, վարելահողի եզրով, թիվ 11 սահմանակետով անցնելով 915 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 220 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 721 մ, հասնում վարելահողի եզրի թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բլուրների գագաթների թիվ 15-18 սահմանակետերով անցնելով 2649 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 122 մ, հասնում վարելահողի եզրի թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, վարելահողի եզրով, բլուրների գագաթներով և թիվ 21 սահմանակետով անցնում 666 մ, հասնում է

բարձունքի գագաթին գտնվող Մալիշկա, Արին գյուղական և Վայք քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9658 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ՎԱՅՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Բարձունքի գագաթին գտնվող Մալիշկա, Արին գյուղական և Վայք քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, վարելահողի եզրով, բլուրներով անցնում 842 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 201 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը, անցնում է 286 մ, հասնում 1301 մ նիշ ունեցող բարձունքին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 299 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից էլ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Վայք-Եղեգնաձոր ճանապարհը, անցնում է 179 մ, հասնում Արփա գետի եզրին գտնվող Մալիշկա, Ջեղեա գյուղական և Վայք քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1807 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ՋԵՂԵԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Բարձունքի գագաթին գտնվող Մալիշկա, Ջեղեա և Ագարակաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 1 սահմանակետով անցնում 1137 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակը, անցնում է 517 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 360 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով ձորակը, անցնում է 600 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 346 մ, հասնում Արփա գետի ափին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Արփա գետի ափին գտնվող թիվ 7-31 սահմանակետերով անցնելով 3756 մ,

հասնում Արփա գետի ափին գտնվող Մալիշկա, Ջեդես գյուղական և Վայք քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ջ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6716 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ԱԳԱՐԱԿԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Ջ»-«Ե»

Մալիշկա, Ագարակաձոր գյուղական և Եղեգնաձոր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Արփա գետի ափին, սահմանագիծը նշված գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, գետի թիվ 1-6 սահմանակետերով անցնում 1980 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնում 1494 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 808 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Մալիշկա, Ագարակաձոր և Ջեդես գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետին:

«Ջ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4282 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ԵՂԵԳՆԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ ` «Ե»-«Ը»

Մալիշկա, Գլաձոր գյուղական և Եղեգնաձոր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանի թիվ 1-2 սահմանակետերով անցնում 787 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 165 մ, հասնում ճանապարհի և այգու եզրագծի հատման կետում գտնվող թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, այգու եզրով անցնում 102 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 6-11 սահմանակետերով անցնում 869 մ, հասնում 1286 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, նույն ջրբաժանի թիվ 13-14 սահմանակետերով անցնելով 454 մ, հասնում է Արփա գետի ափին գտնվող Մալիշկա, Ագարակաձոր գյուղական և Եղեգնաձոր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2377 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ԳԼԱԶՈՐ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Թ»

Մալիշկա, Վերնաշեն և Գլաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 493 մ, հասնում ձորակի եզրի թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 393 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Մալիշկա, Գլաձոր գյուղական և Եղեգնաձոր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 887 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ՎԵՐՆԱՇԵՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ժ»

Բլրի գագաթին գտնվող Մալիշկա, Վերնաշեն և Գողթանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հասնում ձորին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորերով, ապա լանջերով ու ջրբաժանով անցնում 3560 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 94 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ճանապարհը, թիվ 3 սահմանակետով անցնում է 1107 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհին զուգահեռ ջրբաժանով, թիվ 5-8 սահմանակետերով անցնում 1680 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 10-12 սահմանակետերով անցնում 1190 մ, հասնում է ջրբաժանի թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բլուրների գագաթներով, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 1907 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 255 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 313 մ, հասնում 2163 մ նիշով բլրի գագաթին գտնվող թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, բլրագագաթները, թիվ 20-25 սահմանակետերով անցնում 3670 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով ֆերմա տանող ճանապարհը, վարելահողի

Եզրագծի թիվ 27-29 սահմանակետերով անցնում է 1664 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետակի թիվ 31-37 սահմանակետերով անցնում 734 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, շրջանցելով այգին, թիվ 39-41 սահմանակետերով անցնում է 504 մ, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում ճանապարհը, թիվ 43 սահմանակետով անցնում 256 մ, հասնում Մալիշկա գետի ափին գտնվող թիվ 44 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, նշված գետի թիվ 45-49 սահմանակետերով անցնում 497 մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 444 մ, հասնում թիվ 51 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 697 մ, հասնում 1601 մ նիշով բլրի գագաթին գտնվող թիվ 52 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 414 մ, հասնում հաջորդ բլրի գագաթի թիվ 53 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բլրագագաթներով, թիվ 54 սահմանակետով անցնում 1078 մ, հասնում է Մալիշկա, Վերնաշեն և Գլածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ» - «Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20066 մ է:

ՄԱԼԻՇԿԱ – ԳՈՂԹԱՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ժ»-«Ա»

Մալիշկա, Գողթանիկ և Կարմրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, գագաթներով անցնում 1304 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի գագաթների թիվ 2-4 սահմանակետերով անցնում 4239 մ, հասնում բլրի գագաթի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 920 մ, հասնում ջրբաժանի թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհը և, անցնելով 281 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 264 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ճանապարհի թիվ 9-12 սահմանակետերով անցնելով 2356 մ, հասնում

բարձունքի գագաթին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 286 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 15-16 սահմանակետերով անցնում 807 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանի թիվ 18-19 սահմանակետերով անցնելով 589 մ, հասնում է 2540 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 666 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 22-23 սահմանակետերով անցնելով 695 մ, հասնում բլրի գագաթի թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 25-26 սահմանակետերով անցնելով 231 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 488 մ, հասնում բլրագագաթի թիվ 28 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 973 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանի թիվ 30 սահմանակետով անցնում 562 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 31 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 235 մ, հասնում Մալիշկա, Գողթանիկ և Վերնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին:

«Ժ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14896 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարտիրոս գյուղական համայնքի տարածքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Փոռ գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Ջառիթափ գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից և արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Գոմք գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Սերս և «Զ»-«Է» հատվածով՝ Խնձորուտ գյուղական համայնքներին, արևմուտքից և հյուսիսից «Է»-«Ա» հատվածով՝ Ազատեկ գյուղական համայնքին:

ՄԱՐՏԻՐՈՍ – ՓՈՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Սարի գագաթին գտնվող Մարտիրոս, Փոռ և Ազատեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանի թիվ 1-2 սահմանակետերով անցնում 750 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ճանապարհը, վարելահողի եզրով անցնում է 236 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև շարունակվելով դեպի հարավ-արևելք և արևելք, թիվ 5-6 սահմանակետերով անցնում է 506 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 310 մ, հասնում ջրբաժանի թիվ 8 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 172, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, ճանապարհի թիվ 10-12 սահմանակետերով անցնելով 751 մ, հասնում է ճանապարհի և ջրհավաքի հատման թիվ 13 սահմանակետին, այնուհետև ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 14-17 սահմանակետերով անցնում է 721 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-

արևելք, ջրբաժանի թիվ 19-20 սահմանակետերով անցնում 1335 մ, հասնում 2063.5 մ
նիշ ունեցող բարձունքի գագաթին գտնվող Մարտիրոս, Փոռ և Ջառիթափ գյուղական
համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4782 մ է:

ՄԱՐՏԻՐՈՍ – ՋԱՌԻԹԱՓ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»

2063.5 մ նիշ ունեցող բարձունքի գագաթին գտնվող Մարտիրոս, Ջառիթափ և Փոռ
գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից
սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 1-3 սահմանակետերով
անցնելով 863 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից
սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով Ջառիթափ գնացող ճանապարհը և
գետակը, ջրբաժանի թիվ 5-6 սահմանակետերով անցնում է 1271 մ, հասնում բլրի
գագաթի թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում
230 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք,
բնակավայրի եզրագծով, թիվ 9-10 սահմանակետերով անցնելով 483 մ, հասնում թիվ
11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-
արևելք, ջրբաժանի թիվ 12-15 սահմանակետերով անցնելով 1316 մ, հասնում է
ջրբաժանի թիվ 16 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-
արևելք, թիվ 17-21 սահմանակետերով անցնելով 867 մ, հասնում է թիվ 22
սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-
արևմուտք, ջրբաժանի թիվ 23-24 սահմանակետերով անցնելով 716 մ, հասնում 2222.6 մ
նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից
սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի արևելք, թիվ 26 սահմանակետով անցնելով
693 մ, հասնում ջրբաժանի թիվ 27 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-
արևելք, ջրբաժանի թիվ 28 սահմանակետով անցնում 1610 մ, հասնում է 2742.1 մ նիշ
ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 29 սահմանակետին, այնուհետև նույն ջրբաժանով
թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով 643 մ, հասնում է Մարտիրոս, Ջառիթափ և
Գոմք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային
սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8690 մ է:

ՄԱՐՏԻՐՈՍ– ԳՈՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Մարտիրոս, Գոնք և Ջառիթափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 1116 մ, հասնում 2658 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, այնուհետև շարունակվելով դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 4 սահմանակետով անցնում է 655 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 117 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակները, դաշտային ճանապարհը, լանջերով, թիվ 7-11 սահմանակետերով անցնում է 2752 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով, թիվ 13-14 սահմանակետերով անցնում 759 մ, հասնում է Մարտիրոս, Գոնք, գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»--«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5397 մ է:

ՄԱՐՏԻՐՈՍ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՄԱՐՏԻՐՈՍ – ՍԵՐՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Մարտիրոս, Սերս և Խնձորուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 246 մ, հասնում 2116 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 421 մ, հասնում հաջորդ բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, հատելով ճանապարհը, անցնում է 345 մ, հասնում ջրհավաքի թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 244 մ, հասնում ջրհավաքի թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ- արևելք, անցնում 418 մ, հասնում բլրի գագաթի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 89 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 178 մ, հասնում ջրհավաքի թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 222, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 300 մ, հասնում ջրհավաքի թիվ 9 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 10-15 սահմանակետերով անցնում 833 մ և, հատելով ճանապարհը, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրհավաքի թիվ 17 սահմանակետով անցնելով 427 մ, հասնում է ջրհավաքի թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19-21 սահմանակետերով անցնում է 532 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք ջրբաժանով անցնում 772 մ, հասնում ջրբաժանի թիվ 23 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի եզրով անցնում 409 մ, հասնում 2164 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վարելահողի եզրով անցնում 396 մ, հասնում ջրբաժանի թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 26-27 սահմանակետերով անցնում 1958 մ, հասնում վարելահողի եզրի թիվ 28 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 15 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 537 մ, հասնում վարելահողի եզրի թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 360 մ, հասնում ջրհավաքի թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ջրհավաքով անցնում 314 մ, հասնում թիվ 34 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 35-38 սահմանակետերով անցնելով 1654 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 241 մ, հասնում թիվ 40 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 154 մ հասնում 2586 մ նիշ ունեցող սարի գագաթի թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով հատելով ձորակը, թիվ 42-43 սահմանակետերով անցնում 1133 մ, հասնում 2696 մ նիշ ունեցող սարի գագաթի թիվ 44 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 45-47 սահմանակետերով անցնում 1979 մ, հասնում բարձունքի գագաթի

թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 2206 մ, հասնում Մարտիրոս, Սերս գյուղական համայնքների տարածքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16384 մ է:

ՄԱՐՏԻՐՈՍ – ԽՆՃՈՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Զ»-«Ե»

Ձորի եզրին գտնվող Մարտիրոս, Խնճորուտ և Ազատեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Խնճորուտ գնացող ճանապարհը, ձորակի թիվ 1 սահմանակետով անցնում է 997 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա շարունակվում է դեպի հարավ-արևելք, անցնում 411 մ, հասնում 2172 մ նիշ ունեցող բարձունքի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 4 սահմանակետով անցնում 655 մ, հասնում է Մարտիրոս, Խնճորուտ և Սերս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2063 մ է:

ՄԱՐՏԻՐՈՍ – ԱԶԱՏԵԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Ա»

2191 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող Մարտիրոս, Ազատեկ և Փոռ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով, թիվ 1 սահմանակետով անցնում 500 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 837 մ, հասնում 2129 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով ճանապարհը, անցնում է 805 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 438 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Հորադիս գնացող ճանապարհը, ձորակի թիվ 7-10 սահմանակետերով անցնելով 1291 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակի ոլորապտույտներով, թիվ 12-26 սահմանակետերով անցնում 2160 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող

Մարտիրոս, Ազատեկ և Խնձորուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման
«Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6030 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատին գյուղական համայնքի տարածքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սալլի, «Բ»-«Գ» հատվածով՝ Արտաբույնք և «Գ»-«Դ» հատվածով՝ Եղեգիս գյուղական համայնքներին, հյուսիս-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Հերմոն գյուղական համայնքին, արևելքից «Ե»-«Զ» հատվածով՝ Գլաձոր գյուղական համայնքին, հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Գետափ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Աղավնաձոր գյուղական համայնքին, արևմուտքից «Ը»-«Ա» հատվածով՝ Հորս գյուղական համայնքին:

ՇԱՏԻՆ – ՍԱԼԼԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Շատին, Հորս և Սալլի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է հեղեղատարի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 397 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ճանապարհը, անցնում է 385 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվելով դեպի հարավ-արևելք, հատում է Սելին գետը, ճանապարհը, անցնում 392 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը դարձյալ թեքվում է դեպի հարավ-արևելք, Մարտունի գնացող ճանապարհին զուգահեռ անցնելով 648 մ, հասնում է ջրբաժանի թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանի գագաթներով, թիվ 5 սահմանակետով անցնելով 1148 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ջրբաժանով անցնում 729 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող, 1766 մ նիշ ունեցող Շատին, Սալլի և Արտաբույնք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3699 մ է:

ՇԱՏԻՆ – ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Բարձունքի գագաթին գտնվող Շատին, Արտաբույնք և Սալլի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հարավ, ապա հարավ-արևմուտք, այնուհետև կրկին հարավ-արևելք, բլրագագաթների թիվ 2-4 սահմանակետերով անցնելով 1300 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 106 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 762 մ, հասնում Շատին բնակավայրի հյուսիսային եզրագծին՝ Եղեգիս գետի վտակի ափին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը նշված վտակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 9-17 սահմանակետերով անցնում 958 մ, հասնում է բնակավայրի հյուսիսային եզրագծի մոտ գտնվող թիվ 18 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի եզրագծով անցնում 110 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 20 սահմանակետով անցնելով 255 մ, հասնում է Եղեգիս գնացող ճանապարհի եզրին գտնվող Շատին, Արտաբույնք և Եղեգիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3490 մ է:

ՇԱՏԻՆ – ԵՂԵԳԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Ճանապարհի եզրին գտնվող Շատին, Եղեգիս և Յերմոն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա արևելք, ճանապարհի թիվ 1-10 սահմանակետերով անցնում 889 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 403 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13 սահմանակետով անցնում 143 մ, հասնում Եղեգիս գետի ափին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը նշված գետով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, գետի թիվ 15-32 սահմանակետերով անցնում 2394 մ, հասնում է Եղեգիս գետի ափին գտնվող Շատին,

Եղեգիս և Արտաբույնք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3707 մ է:

ՇԱՏԻՆ – ՀԵՐՄՈՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Եղեգիս գետի ափին գտնվող Շատին, Եղեգիս և Հերմոն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, հետո հարավ, ժայռերի զագաթներով, այնուհետև ջրբաժանով թիվ 1-22 սահմանակետերով անցնում է 3206 մ, հասնում բարձունքի զագաթին գտնվող Շատին, Հերմոն և Գլաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3206 մ է:

ՇԱՏԻՆ – ԳԼԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Բարձունքի զագաթին գտնվող Շատին, Գլաձոր և Հերմոն գյուղական համայնքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 518 մ, հասնում բլրի զագաթին գտնվող, 2761 մ նիշով թիվ 1 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 535 մ, հասնում ջրբաժանի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 1289 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 580 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 845 մ, հասնում բլրի զագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, զագաթներով, թիվ 7-10 սահմանակետերով անցնում 3283 մ, հասնում բարձունքի զագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին, այստեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 12-13 սահմանակետերով անցնում 1062 մ, հասնում Եղեգիս գետի ափին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Եղեգիս գետի թիվ 15-21 սահմանակետերով անցնում 1944 մ, հասնում գետի ափին գտնվող Շատին, Գլաձոր և Գետափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10057 մ է:

ՇԱՏԻՆ – ԳԵՏԱՓ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Զ»-«Ե»

Դաշտային ճանապարհի եզրին գտնվող Շատին, Գետափ և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, սեփականաշնորհված հողերի կողքով անցնող ճանապարհի ոլորապտույտներով, ապա լանջով անցնում է 1297 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցնելով 1677 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 5-6 սահմանակետերով անցնում 1372 մ, հասնում Եղեգիս գետի ափին գտնվող Շատին, Գետափ և Գլաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4346 մ է:

ՇԱՏԻՆ – ԱՂԱՎՆԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Ը»

Շատին, Հորս և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, ջրբաժանի թիվ 1 սահմանակետով անցնելով 1094 մ, հասնում է բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը և ջրբաժանով անցնելով 596 մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով միանում ձորակին, որտեղից թեքվում է դեպի հարավ և հարավ-արևելք, ապա միանում դաշտային ճանապարհին, ճանապարհի ոլորապտույտներով շարունակվում դեպի հարավ-արևելք և, անցնելով 3593 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Շատին, Աղավնաձոր և Գետափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5283 մ է:

ՇԱՏԻՆ – ՀՈՐՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Շատին, Հորս և Սալլի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 518 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատում գետը, անցնում 645 մ, հասնում ջրբաժանի թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 3-6 սահմանակետերով անցնում 1837 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից նույն ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գազաթներով անցնում 703 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և, անցնելով 250 մ, հասնում է 2116 մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 621 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա վարելահողի եզրով կրկին թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնում է 302 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով, թիվ 12 սահմանակետով անցնում 354 մ, հասնում է անտառի եզրի թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 266 մ, հասնում Սելիմ գետի վտակի ափին գտնվող թիվ 14 սահմանակետին, նշված վտակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վտակի թիվ 15-21 սահմանակետերով անցնելով 1018 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 23-28 սահմանակետերով անցնում 1163 մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 260 մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 30 սահմանակետին, այստեղից էլ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 262 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, գազաթներով, թիվ 32-33 սահմանակետերով անցնում 670 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 34 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 233 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Շատին, Հորս և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9104 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ ՉԻՎԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Չիվա գյուղական համայնքի տարածքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ռինդ գյուղական համայնքին, հարավ-արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Արենի գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Ելփին գյուղական համայնքին:

ՉԻՎԱ - ՌԻՆԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Չիվա, Ռինդ և Ելփին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով անցնում 222 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով, ապա լանջով անցնում 1873 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, լանջով անցնելով 948 մ, հասնում բարձունքի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 765 մ, հասնում 2313 մ նիշ ունեցող սարի գագաթի թիվ 4 սահմանակետին, ապա շարունակվելով դեպի հարավ-արևմուտք, հատում է դաշտային ճանապարհը, անցնում 912 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 6-11 սահմանակետերով անցնում 2628 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1438 մ, հասնում ջրբաժանի թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 428 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, ապա հատելով Ելփին տանող ճանապարհը, թեքվում է դեպի արևմուտք, անցնում 167 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 16 սահմանակետով անցնում 386 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 17

սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհով անցնում 659 մ, հասնում ջրբաժանի և վարելահողի եզրի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 495 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, ճանապարհի թիվ 20-25 սահմանակետերով անցնում է 2488 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ճանապարհով անցնում 276 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 149 մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 433 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Ռինդի բնակավայրի եզրի թիվ 30-31 սահմանակետերով անցնելով 505 մ, հասնում է բնակավայրի եզրով անցնող ճանապարհի թիվ 32 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի եզրագծով անցնող դրենաժի թիվ 33-38 սահմանակետերով անցնում 369 մ, հասնում թիվ 39 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 206 մ, հասնում 1301 մ նիշ ունեցող բարձունքի գագաթին գտնվող Չիվա, Ռինդ և Արենի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15349 մ է:

ՉԻՎԱ – ԱՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Եռանկյունաչափական 1538 մ նիշ ունեցող կետից, որը հանդիսանում է նաև Չիվա, Արենի գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետ, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 1232 մ, հասնում բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, վարելահողի եզրով անցնում 786 մ, հասնում ջրբաժանի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վարելահողի եզրով անցնում 345 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, վարելահողի եզրով անցնում 515 մ, հասնում բլրի գագաթի թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վարելահողի եզրով՝ թիվ 5 սահմանակետով, անցնում 414 մ, հասնում Ելփին գետի ափին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը արտադրական մասի եզրով թեքվում է դեպի հյուսիս, հատելով Ելփին-Արենի միջհամայնքային ճանապարհը, թիվ 7-9 սահմանակետերով

անցնում է 449 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 183 մ, հասնում ջրբաժանի թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 12 սահմանակետով, ջրբաժանով անցնում 411 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով անցնում 428 մ, հասնում 1301 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտվող Չիվա, Արենի և Ռինդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4763 մ է:

ՉԻՎԱ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՅՍԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Աղբյուրի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՉԻՎԱ– ԵԼՓԻՆ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Չիվա, Ելփին և Ռինդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով՝ թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1343 մ, հասնում ջրբաժանի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է 779 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 828 մ, հասնում 2098 մ նիշ ունեցող Եռանկյունաչափական «Շրեստիսար» կոչվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 6-10 սահմանակետերով անցնելով 1806 մ, հասնում է բլրի գագաթի թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը, գերեզմանոցի եզրագծով անցնում է 604 մ, հասնում բլրի գագաթի թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 13-16 սահմանակետերով անցնելով 788 մ, հասնում է ջրհավաքի թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, հատելով Ելփին-Չիվա ճանապարհը, թիվ 18-25 սահմանակետերով

անցնում է 1405 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, ապա նույն ջրհավաքով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 141 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ--արևմուտք, ձորակով անցնում 108 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, այնուհետև շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Արարատ-Եղեգնաձոր միջպետական նշանակության ճանապարհը և, ձորակի թիվ 29-32 սահմանակետերով անցնելով 1142 մ, հասնում է ջրբաժանի թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 483 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Չիվա, Ելփին գյուղական համայնքների տարածքների և պետական սահմանի (Ադրբեջանի Ջանրապետություն) բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9428 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ ՌԻՆԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռինդ գյուղական համայնքի տարածքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

